

Hentchak :

Organe Central
DU PARTI

S. D. HENTCHAKIAN

Téléphone 814-18

Հ Ն Չ Ա Կ

Journal Arménien
mensuel

XXIV Année

Adresse Télégraphique :
Հեռագրի հասցէ բոլոր
երկիրներու համար
"HENTCHAK" Paris

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ Ս. Դ. ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ՅԵՐԻՉՄԻ ՆՈՐԱԳՈՅՆ ՁԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Տիրապետողը ինքնաբերաբար ոչինչ չի տալ, նա երբեմն պարտաւորուած կլինի զիջումներ անել՝ բայց նորից յետ առնելու պայմանով, երբ յարմար ըլլայ ներկայանայ. կառավարութիւններին և նրանց խոստումներին հաւատք ընծայելը և արժէք տալը պարզամտութիւն կլինէր. նրանց տապալելը և ասպարէզից, տիրապետութիւնից դուրս քշելը՝ պայքարի, ընդհանուր ջանքի անմիջական նպատակը պիտի լինի,—սրանք են պատմութեան տուած դասերը՝ ամէն տեղ և ամէն ժամանակ, երբ խնդիրը գալիս է ՀՆԻ քայքայումի և ՆՈՐԻ վերահաստատումի մէջ:

Բոպէն օրհասական, տագնապալից էր: Յարիզմը իր մեծամորթութեան, աշխարհակուլ քաղաքականութեան հետապնդող օրերին մի քիչ սթափուեց. երբ իրական համոզում կայացրեց, որ իր արհամարհած, գաճաճ համարած Զապոնացուն անգամ չաղթել չի կարողանում: Զօրքը չէր կուտում, երկրի մէկ ծայրից միւսը՝ ընդհանուր դժգոհութիւն, բողոք, կռուի ձիգեր. թըշնամին ամէն կողմ էր, նա չէր բռնուում,—գազը գտնուում էր վերահաս փտանդի մէջ. ուրեմն՝ «Դանըմարքայի մէջ մի բան փտել էր», և այդ փտածը շքտկելու, վերանորոգելու, նոր ոյժ առնելու, ժամանակ վատակելու համար՝ Յարիզմը իմաստութիւն համարեց տեղի տալ՝ մինչև որ ոյժ ու կարողութիւն ձեռք բերէ իր զիրքը ամրապնդելու և նորից իր գործը շարունակելու, իր սեպհական շահերի և գաղափարների շրջանակի մէջ մտնելու, արհամարհելով, կոխկրտելով ամէն բան՝ նոյն խակ իր տուած խոստումները:— Այդպէս էլ եղաւ:

Ընհրանուր պատրանքից հազիւ աչքերը բացած՝ Յարիզմը դադարեցրեց տիրուող ազգերի դէմ մղուած հալածանքը, ուսականացումի խօլ թափը կանգ առաւ. նա այլևս իր սև ուրուականը չպիտի տարածէր այն փոքր ազգութիւնների վրան, որոնք դժբախտութիւն էին ունեցել, պատմութեան ընթացքում, հակառակ իրենց

կամքին, ուս տէրութեան լանգուածի մէջ մտնելու: —Փինլանդացին, Լեհը, Հայը, Հրէան, Վրացին, Լատիշը... և այլն, չպիտի հետապնդուէին, սարսափների մասնաւոր առարկայ չպիտի դառնային հէնց նրա համար, որ ա՛յլ պատմա—անհատականութիւններ էին կաղմում: Նրանք կարող էին ապրել և իրենց ինքնուրոյնութիւնը պահել՝ որպէս ազգ, որպէս առանձին ժողովուրդ:

Ազգերի, ժողովրդների զարգացման գլխաւոր դրձերը, պատմական որոշ ըրակները և նրանցից յառաջացող հոգեբանութիւնը նման են:

Յարիզմի այդ ժամանակուայ հոգեկան վիճակն էր ունեցել երբեմն և՛ Աւստրիան, այնտեղ էլ նոյն խնդիրներն էին հրապարակի վրայ դրուած:

Ու այդ ժամանակ աւստրիական միապետութեան երկու սիւների մէջ հետեւեալ խօսակցութիւնը տեղի ունեցաւ.

—Վինդիշգրաց. »Մի միապետութիւն չի կարող ապրել՝ առանց ազնուականութեան. պատրանք կլինէր ուրիշ տարրեր փնտռել՝ միապետական սկզբունքը նրանց վրայ յենելու համար:

—Շվարցենբերգ. »... Այո՛, շատ ցանկալի կլինէր ազնուական տարրը տիրապետող դարձնել մեր պետութեան նոր ձևի մէջ, դա ոչ ոք ինձանից լաւ չգիտէ Բայց որովհետև ձևերը կեանք և ոյժ են ստանում անհատների միջոցով՝ ևս չաջողութեան ո՛չ մի նշոյլ չեմ տեսնում այդ ցանկութիւնը իրագործելու մէջ: Ես մեր դասակարգի մէջ չեմ ճանաչում երկվեցեակ մարդ, որ քաղաքական բաւականաչափ իմացականութիւն և անհրաժեշտ տեղեկութիւններ ունեցած լինէր, որպէսզի իշխանութեան մէկ կարևոր մասը նրանց յանձնուէր, առանց երկիւղ կրելու, որ նրանք այդ չէին վտանգիլ... պէտք է կռուել ուս մի կառավարութեան դէմ... բայց... բայց կառավարութիւնը միայն այդ կարող է անել. որովհետև այնպիսի մի թոյլ դաշնակից, որպիսին է, դժբախտաբար, մեր ազնուականութիւնը, նա իր ծառայած գործին աւելի վնաս է տալիս, քան օգուտ»:

Սա է պատմութեան թատերաբեմից վաչք իջնող դասակարգերի տեսարանների խոստովանութիւնը և հոգեբանութիւնը:

Յարիզմի գլխաւոր նեցուկներինը շատ տարբեր չէր՝ այդ օրերի մէջ:

Հին, կնուտի, մէջքը ամէն հրամանի առաջ խոնարհած Ռուսիան երերում էր: Նախկին ձևի պաշտպանները այլևս անընդունակ էին դարձել ճարճատուած Յարական ծունը անխտանգ պահելու՝ ոռնացող հողմերի առաջ: Աղնուականութիւնը, եկեղեցականութիւնը այլևս իրենց անկարող էին զգում գոյութիւն ունեցող պատմական կառուցուածքի նեցուկը մնալու:

Հարկաւոր էր նոր կեանք, նոր տարրեր:

Ու, ճարահատ, Յարիզմը մի ըրպէ իրեն փրկուած համարեց, երբ հռչակաւոր «Մ ա ն ի Ֆ է ս ա» ով խոստացաւ բաւականութիւն տալ պաշքարող տարրերին, և նոր կեանքի օրինական գուռ բանալ:

Ռուսաստանը պիտի ստանար պարզամէնտական հաստատութիւն, ամէն դասակարգ, մարտնչող ամէն ոչոք, օրինական հողի վրայ կանգնած, իրաւունք պիտի ունենար իր մարտը առաջ մղել, յաղթանակել ու տիրող հանդիսանալ, եթէ պատմութեան հոսանքը իր կողմն ունէր: — Այդպէս էր ենթադրուած ու մանց կողմից:

Բայց սկզբից իվեր կար և՛ մի այլ կանխատեսութիւն: Ասում էր, որ Յարիզմի տուած բոլոր խոստումները խաբուսիկ էին. դրանք նեղը ընկնողի խաղեր էին, ժամանակաւոր խորամանկութիւններ, մինչև որ չարմարաւոր ըրպէներ պալին, որից յետոյ նա իր զիբբը պիտի փոխէր: Իրականութիւնը եկաւ այս վերջինը հաստատելու:

Նոր կեանքի արտայայտիչը եղող «Գուճան» դարձել է մի կատարեալ իրտուելակ, որի յետեից Յարիզմը կուռ կեցած՝ ամէն տնօրինութիւններ անում է: Ժողովրդական ներկայացուցչութիւնը հեղնութեան է վերածուել: Յարի կամբը ամէն պարիսպներից վեր է. նա է որ կայ, նա է իշխողը, բացարձակ թագաւորողը: Ինքնակալութիւնը իր բոլոր ստորոգելիներով շարունակում է գործել: Նա այլևս ճածկելու, » ս ու տ ի ս ա տ ու կ ի « երևոյթը առնելու կարիքը չի զգում, որովհետև իրեն բաւականաչափ զօրեղացած, ամբապլնդուած է տեսնում: Եւ աջ ու ձախ կնուտը շառաչում է, «բարձրագոյն հրաման»ը՝ որոտում...

Հայ, Լեհ, Հրէայ, Փինլանդացի... նորից անվրտահելիների ցուցակի մէջ են մտած. ռուսականացումը իր թևերը լայն բացած առաջ է գնում:

Երէկուայ քրթմնջող բուրժուազիայի, որոտացող պրօլետարիատի առաջ այլևս ունի բաւականաչափ ուժը, գնդակ, կախաղան, բանտ, աքսորավայրեր և հազարաւորներին խաւարտչին նկուղների մէջ լռիկ մնջիկ՝ վարակիչ հիւանդութիւններով կոտորելու «պետական գաղտնիք»:

Ու Ստոլպինը »կարմիր« փողպատը հագած, շառաչուն մտրակը ձեռքին, արեան ճապաղիքների

միջով յառաջ է փարում իր յաղթական կառքը, ինչպէս բազէն՝ թռչունների տարմին:

Բայց պատրանքը գալիս է:

Իրականութեան ծալքերը լայն կերպով բացուած են:

Գժգոհութիւնը, բողբջը այլևս ընդհանուր է. նոյն իսկ նրանք, որոնք դեռ երէկ Յարիզմի բարեկամներ էին համարուած, նրանք իսկ փորձով տեսան, համոզուեցան, որ պատմական այդ հաստատութիւնը այլևս քայլել, ապրել չի կարող, որ ժամանակը նրա մասին տուել է իր վերջին վճիռը:

Իսկ Ռուսական Յեղափոխութեան իսկական լծակը, աներկիւղ ռահվիրան, նա որ պիտի գայ նոր կեանք հաստատելու, հինը արմատապէս տապալելու և ընկերային յեղափոխութիւնը իրականացնելու, նա՛ պատմական այդ մեծ հսկան, պրօլետարիատը արդէն իր շարքերը սեղմելու վրայ է: Անցաւ ըրպէի յառաջ բերած լքումը. նա՛ իր ոչժերը վերակազմութեամբ՝ պատրաստուած է օրհասական կռիւր մղելու...

Երբ մրրիկը փոթորկում է, հրաբուխը ժայթքումի ակնցայտնի նշաններ արձակում,—այդ օրերումն է, որ Յարիզմը նոր շահատակութիւնների շրջանի մէջ է ուզում մտնել:

Նորագոյն Թիւրքիան Յարիզմի պատմական ատելութեան մասնաւոր թիրախն է դարձել: Նա ո՛չ մի գնով չի ուզում հաշտուել Թիւրքիայի գոյութեան, ամբապլնդման և վերածնութեան գաղափարի հետ: Նորից Բալկանները և Արևելքը «քրիստոնէից պաշտպանի» առանձին հողածութեան առարկան է դարձել, նորից երկգլխանի արծիւր իր թևերը բացած՝ հեռաւոր հորիզոններ է թռչել ուզում...

Ու այդ բոլորը այն ժամանակ, երբ Յարիզմը մի կատարեալ լախակ դարձած՝ լողում է յորձանուտ ծովի մէջ, հարիւրաւոր խարակներով շրջապատուած:

—«Ես ժամանակս իզուր անցնում եմ որդնոտած մի հաստատութիւն ամբայնելու»—աւաղած էր Աւրտրիական Կայսր մէրդինանդ Ա.—ինը:

Դա կլինի և՛ վերջին բացագոնչութիւնը Ռուսական Կայսեր՝ Նիկոլայ Բ.—ինը:

Այդպէս է գծագրել պատմութիւնը, այդպէս է վճռել մարդկային ընկերութեան դարգայման ընդհանուր օրէնքը: Յարիզմը բացառութիւն կազմել չի կարող:



ԹԻՒՐՔԻԱՅԻ ՎԵՐԱԾՆՈՒԹԵԱՆ ՕՐԵՐՈՒՄ (1)

II

Բացարձակապետական բեթիմի տակ դարերից իվեր կրող Թիւրքիւն պաշտօնապէս ընկնում, փլչում էր. նա մտնում էր պրօցեսային մի նոր աստիճանի, բոլորովին մի նոր փուլի մէջ: Թիւրքիւն օտից ցզուրի պիտի նորա-էր. նա պիտի դառնար մի նորագոյն պետութիւն՝ եւրոպական իմաստով: — Այդ էր, ըստ երևոյթիւն, ընդհանուր բաղձանքը, ներքին ճղումը այն բոլոր ազգակների, որոնք գալիս էին պատմական այս բուպէի արտայայտիչը և միանգամայն ղեկավարիչը լինելու:

Ի՞նչ էր իրերի խիական բնութիւնը, ի՞նչպէս էին այդ հասկացել Հնի պաշտպանները, ի՞նչպէս էին յրանում, ըմբռնում նորի ռահվորանները, — ահա ընդհանուր թեզը:

Ձերք ամէն կողմնակալութիւնից, հետո ամէն տեսակի խճբծող ոգուց, կանգնելով գաղափարական ղխտողի և պաշարողի ղիրքի վրայ, առաջորդելով միայն և միայն երկրի ընդհանուր շահերով, նկատողութեան առնելով մերկ իրողութիւնը և փաստերը, — մենք ամենայն համարձակութեամբ յայտնում ենք, որ այդ հարցերին ճամուտոր, որոշ պատասխան չեն բերում նրանք, որոնց գործունէութեան եղանակը պիտի գար այդ բոլոր փաստացի կերպով ամէն ինչ պարզելու, առանց երկմտութեան փոքրիկ խորշ անգամ թողնելու:

Այո՛, "ռահմանարական" շրջանի գործող պետական ղեկավարիչները և գործերի ընթացքը իրենց ձեռքի մէջ կեդրոնացնող ճարմիները երևան չզրեցին ժամանակակից իրերի հասկացողութեան մի ընդհանուր փիլիսոփայութիւն, որոշ հիմնական սկզբունքներ, որոնց աստիճանական կիրառումը աչքի առջև բերելով տիրէր այն հասցումը, թէ արգարև նորը սկսել է Հնի տեղը բռնել և իր տիրապետութեան իրաւունքի մէջը ճանել՝ պետական կեանքի բոլոր արտայայտութիւնների մէջ:

Փնտռե՛նք նորի փիլիսոփայութիւնը "պարլամենտ"ի շրջափակի մէջ: — Փորձենք: Բայց, պժառողբար, շատ մեծ յաջողութեան չափով հանդիպենք: Այդ տեսակետով՝ այնտեղից, հաւաքական այդ ազգակից, երկրի ներկայացուցչութիւնը արտայայտող այդ հաստատութեան գործերից՝ մենք աչքի դարկող վճռական, որոշիչ ոչինչ չենք տեսնում: Այնտեղ ամէն ինչ խառն ի խառն է, անկարգ, անկանոն, ընդհանուր մէթոս, զստաւորութիւն ասուած բանը չկայ: — Օրէնքներ են քուէարկուած, որոշումներ են տրուած, առանց որ ղրանք ընդհանուր մի նպատակ, օրգանական մի կապ, ամբողջական մի ղանգուած կազմէին: Կարձ՝ այնտեղ կատարուած իրողութիւնները ճանրակրկիտ վերլուծուած են թարկելով անհնար է գտնել այն կորէր Բէլը, որ անխալ բացայայտիչը լինէր նորագոյնի, պետական այն ձևի, ինչպիսին որ հասկանում է ժամանակակից քաղաքական գիտութիւնը:

"Փոքրիկ յրացումներ, փոքրիկ հնարիմացութիւններ, փոքրիկ ճարպիկութիւններ, փոքրիկ խարդաւաններ, — սրանք են այն միջոցները, որոնցով մեծամասնութիւն նուաճող արուեստը գործում է Օրէնարական ժողովի մէջ: Գործը այնտեղ է համուած, որ այլևս ուշադրութիւն չեն դարձնում թէ ինչ է կատարուած իրենց շուրջը: . . Ու երեւէր իսպառն մտացուած է":

Լուի Բլանի ներկայացրած այդ "Օրէնարական ժողով"ի հասկացողութեանը մէջ շատ լաւ տեղ ունի օսմանեան նորահաստատ Պարլամենտը: Պատկերը կատարեալ է: Այնտեղ՝ "Նոր-էր" ընդհանուր փիլիսոփայութիւն, բաղձատարը մի երկիր արճատապէս վերանորոգելու ճգնում ունեցող հիմնական սկզբունքներ կատարելապէս բացակայում են, — այդ է ասուած ժայռ իրականութիւնը: Հետևաբար մեզ հետաքրքրող խնդիրների վճռական պատասխանը այնտեղից չէ որ պիտի սպասենք: Նա չեղաւ այն, ինչ որ պիտի լինէր, ինչ որ բուպէն պահանջում էր որ լինէր: Նորը ճնելու, եղանելու (devenir) այս օրերի մէջ, նա որոշ ուղղութեամբ տեղաճարձող ոյժ չհանդիսացաւ:

Ձգանելով մեր ցանկացածը "Պարլամենտի" մէջ, մենք ղրական արդիւնքի չէինք հասնել, եթէ մի առ մի ճասնանը շէինք բուպէի պատասխանատուութեան՝ տակ ղտնուող և միւս հաստատութիւնները:

Հարցը աւելի սեղմենք:

Մի երկրի կառավարութիւն, իր էութեանը մէջ, ո՛չ այլ ինչ է, եթէ ոչ տիրող գասակարգի յանձնակատար գործիքը, — ասուած է մեզ ճարքսիտական գիտութիւնը: Եւ շատ ճիշդ:

Արդ, նորագոյնի պրօցէսի մէջ ճանող՝ ամէն երկրների յանձնակատար գործիքի ղերը ստանձնողներից մէկ ճասը, հէնց իրենց սկզբնական քայլերում, քաղաքական այն համոզումն են արտայայտել թէ՛ որքան որ մի երկիր ղարգանում, յառաջադիմում, քաղաքակրթում է, այնքան էլ պետութեան միասին աւելի է սահմանափակում: Ով այս հիմնական ըսկզբունքը իւրացրել, իր անկրկնաքարն է ղարձրել, նա էլ իր գործունէութեանը այդ ուղղութիւնն է տուել: — Ո՛չ, այդ սրելալ է, պնդել են ուրիշները: Որքան որ քաղաքակրթութիւնը աւելի ու աւելի է տարածում, ինչքան որ մի երկիր աւելի է բարգաւաճում և ղարգացման նորագոյն փուլերի մէջ ճանում, այնքան էլ պետութեան միասին աւելի է ընդարձակում:

Նայելով թէ այդ երկուսից ո՛ր հասկացողութիւնն է տիրել քաղաքական աղղակներն էլ ըստ այնմ գործել, շարժւել են:

Հարցը հէնց այն է, թէ օսմանեան պետական անձնաւորութիւնները և պատասխանատու ղեր ստանձնողները քաղաքական այդ փիլիսոփայութիւնից ո՛րն են ընդգրկել:

Պրպոնեցէք որքան որ կուզէք, ո՛ւր որ կուզէք, և ղուք ղրական, որոշ ոչինչ չէք ունենալ: Ո՛չ մէկը կայ, ո՛չ միւսը, և ղրա համար էլ ասում ենք թէ ամէն ինչ խառնիլուուն է, անկանոն, առանց սիստէմի, առանց որոշ փիլիսոփայութեան, առանց մի ընդհանուր ուղղեղծի: Եւ հէնց այդ պատճառով էլ այն տարտամ, անգոյն, անորոշ, անտույզ վիճակը, որի մէջ որ ղրուում է երկիրը:

Բայց ղեռ վերաղաւնանք յարուցում խնդրի էութեանը:

Քաղաքակրթութեան յառաջադիմութեամբ, ժամանակակից պետութեան միասին աւելի ու աւելի սահմանափակում, թէ՛ ընդարձակում, ընդդաշնում է: Պետութեան միջաճըտութիւնը նոր ստորոգելիներով աւելանում թէ՛ պակասում, կրճատում է:

Նրանք, որոնք պաշտպանում են այն տեսութիւնը, թէ քաղաքակրթութեան յառաջադադարումը, ընկերութեան ղարգացումը, պետութեան միջաճութիւնը աւելի ու աւելի սահմանափակում է, այդպիսիները, ահա, այսպէս են փաստում: — ճարպիկ հետզհետէ այն գիտակցութեանն են գալիս, որ անհատական շահը ղուգորում, միանում է ընդհանուրի, հաւաքականի շահի հետ, քանի որ մէկի շահը ամբողջութեան մէջ է հարում և մէկ միութիւն կազմում, այդ է ցոյց տալիս յառաջադիմութեան, քաղաքակրթութեան հո-

(1) Տես "Հնչակ", թիւ 1—2, 1910

ասնքը, ասել է թէ պիտի գայ ճի ժամանակ, երբ պետութեան ստորագրական ստորագրելին ամբողջապէս պիտի վերանայ, իսկ ճինչ այդ՝ պետական ձեռնարկն իր ձեռքին ունեցող ամէն պատասխանատու անձնաւորութիւն իր գործունէութեան այն ուղղութիւնը պիտի տայ, որ աստիճանաբար պետութեան ճիշտաձեւութիւնը սահմանափակուի, նրա ճիւղերն կրճատուի: Կատարեալ էակներն ճէջ, ժամանակակից Հասկարողութեամբ, կառավարութիւն չի կարող լինել: Եւ քանի որ ճօտիկ ապագան այդ է ցոյց տալիս, և քանի որ ինչքան քաղաքակրթութիւնը յառաջադիմում է և ընկերութեան անդամները հետզհետէ լաւագոյն են դառնում, կիշանակի թէ պետութեան, իշխանութեան ճիշտաձեւութիւնը աստիճանաբար պիտի կրճատուի, ուրեմն և ճեր օրերն պետական ճարդիկ անհատապաշտական ուղղութիւն պիտի ընդգրկեն:

Վչօր սոյրական նկատողութեան կարգն է անցել այն, ասում է Գլոց, թէ ինչքան որ քաղաքակրթութիւնը և բանականութիւնը յառաջադիմութիւն են գործում,—ընկերային իրողութիւնների այն կարգը, որ արտաքին ամէն անհրաժեշտութիւնից դուրս է, ինչպէս և դուրս Հասարակական իշխանութեան ամէն գործունէութիւնից, օրից օր աւելի ընդարձակում, աւելի ճեճ չափեր է աւնում: Այն ընկերութիւնը որ չի կառավարում, այն ընկերութիւնը, որ գոյութիւն ունի իճացականութեան և ճարդկային կամքի դարգացումով,—այդպիսին հետզհետէ աւելի և աւելի է ընդարձակում, ինչքան որ ճարդը կատարելագործում է: Այդ տեսակն է հետզհետէ ընկերային հիմունք դառնում:

Հակա—ճիշտականների (anti-interventioniste) թէղը Հատ պարզ է: Նրանք ոչ ճիւղն անտեսական, այլ նոյնիակ քաղաքական գործերի ճէջ աստիճանաբար սահմանափակում, կրճատում, ջնջում են պետութեան ստորագրելները:

Միշտաձեւութեան կողմնակիցները տրամագծօրէն հակառակ թէգն են պաշտպանում:

Հետեւեք Դիւպօն-Ուայթի (Dupont-White) այդ նրկատմամբ արած խորհրդածութիւններին:

Վնհատը և Պետութիւնը՝ իր դրքի ճէջ նա բուն կերպով դէճ է երնում հակաճիշտաձեւութիւններին, վկայութեան կանչելով պատմութիւնը, ճարդկային սեռի մնայուն ճիւղումները և ժամանակակից իրողութիւնները, նա պաշտպանում է այն թէղը, թէ ժամանակակից պետութեան ճիւղերն անհրաժեշտաբար աճում, ընդլայնում է, որքան որ քաղաքակրթութիւնը յառաջադիմում է:

Առնենք պատմութիւնը,—նա ճեղ որոշակի կերպով ցոյց է տալիս, որ պետութեան գործունէութիւնը և ճեւրնհատութիւնը այնքան աւելի է Հատանում, որքան որ քաղաքակրթութիւնը աւելի է բարձրանում: Սկզբում ամէն տեղ սիրել է բացարձակ աղատութիւնը,—դա ամէնքի կոխն է ամէնքի դէճ, և յաղթել է ամէնից ուժեղը: Այնտեղ ամեն որ որսուող և որսացող է: Այդ ընկերութեան կենդանի օրինակը, ճեր օրերում, կարելի է տեսնել Աճերիկեան Հեռաւոր Արեւմուտքի (far-West) Վաչկատունների (Squatters) բընակավայրերի և վրանների ճէջ: Ո՛չ օրէնք, ո՛չ էլ դատարան. ոչ թը ճիւղհեճան է, ճնշում ճիւղցը՝ բացարձակ տիրապետողը և վարիչ բանականութիւնը:

Այդպէս է եղել, սկզբում, ամէն տեղ:

Յետոյ գալիս է անցողական այն Հրջանը, որ յայտնի է Միջին Դար անունով: Հասարակական իշխանութիւնը կարճակերպում է և գտնում է դատերի, սատապետների ճեւրում: Մարդասպանութիւնը յանցանք չէ Հասարակական կարգի հանդէպ, այլ անյնական թէ ճատուցում, գնում է դրամով Իրական վիճարանութիւնները վճում են գէնքով. ամէնից ուժեղն էլ Հահում է դատը:

Ճիրում է աւատական Հոդի իրաւունքը: Պատերազմները անպակաս են ուժեղների և թոյցերի ճիւղը, Հասարակական ճառայութիւնների և ընդհանուր կանոնների սարճեր Հաղիթ սկսում են նշարուել՝ դօրաւորի այդ անսահման կառուածամասի ճէջ:

Պատմութիւնը ցոյց է տալիս, որ դրանից յետոյ գալիս է կէրքնացում: Պետութեան ճիշտաձեւութեան ստարեղը և ստորագրելները հետզհետէ աւելի և աւելի ընդարձակում են: ճարէց տարի նոր օրէնքներ, ընկերութեան Հասարակական գործունէութեան Համար նոր պաշտօններ են բատեղւում, որոնց բոլորի էլ նպատակն է ընդհանուր կարգաւորութիւն և ապահովութիւն առաջ բերել: Վարչական ճէքեան կաղւում է կտոր կտոր, օրից օր նոր ճատեր են աւելանում: Աճէն օր կարիքների Համար ճիշտաձեւութեան նոր եղանակներ են ճէջտեղ գալիս:

Հասարակական իշխանութիւնների աճումը իր գագաթնակէտին է Հատում, երբ տիրապետում է դեպտօտիղը, բնականութիւնը: Սա ճգտում է ամէն ինչ ինքը վարել, ամէն բան իր ճեւրը կեղրնացնել, դրա Համար էլ նորագոյն պայճանների ահաղին լեղէօններ է ստեղծում:

Այդ ճայրայեղ կեղրնացումից ճնում է բէակցիւս, որի դիւստօր օրգաններն են Հանդիսանում 18-րդ դարի տընտեսագէտները որ իրենց ընդհանուր ճգտումը արտայայտում են "պետութիւն քաղցիկ" բանաճևով:

Պայթեց Փրանսիական ճեճ Յեղափոխութիւնը: Բաղաբական փիլիսօփայութիւնը բնական կէրքնացնել անունով էր խօսում: Մի լուղէ կարճուեց, որ պետութեան ստորագրելները վերօջի պիտի Հատարեցնեն: Բայց դա երաղ էր: Իրականութիւնը բոլորովին Հակառակը բերեց:—Գաւառական ինքնավարութիւնները, տեղական "պարլամէնտական" Հաստատութիւնները ջնջուեցան, խափանուեցան և՛ արտօնեալ ճարճիւնների ու Համբարութիւնների առանճիւղնորհումները:—Սղղիւցած անհատը ճէն ճինակ մնաց ամենակարող պետութեան առաջ: Հասարակական իշխանութիւնը նորանոր ստորագրելների տէր դարճաւ և նրա գործունէութեան սահմանը աւելի ու աւելի ընդարճակուեցաւ:

Եկաւ Կայսրութիւնը, նա օգտուեց յեղափոխական օրէնքներից, յառաջ բըէց ամէն ինչ ճնշող վարչական ճէքեան: Փրանսիական աղը իր վերջնական կաղմաւորումը գտաւ: Դրանից յետոյ, Հակառակ քաղաքական ճևի ճի քանի անգամ փոփոխութիւններին, պետական ճիշտաձեւութիւնը ո՛չ թէ կրճատուեց, այլ նրա ստորագրելները հետզհետէ աւելի ու աւելի ընդարճակուեցին:

Այդպէս է եղել պատմութեան ընթացքը:

Բայց, ամէն ինչ կանոնաւորելու այդ թափը դուցէ ճամնայատուկ եղած լինի ճիւղն գաղղիական աղղի՛ն, դուցէ դա գաղղիական ճի Հիւանդութիւն է, չէ՞ որ անհատական ճեւներեցութեան ողին այնտեղ ամէնից աւելի նուաղ է գարգացել: Ոչ, փաստում է Դիւպօն-Ուայթ: Այդ ճիւղնայն է եղած և՛ ուրիշ աղղութիւնների, ուրիշ երկրների ճէջ:

Անղո-Սաքսօն յեղերի ճէջ անհատական ճեւներեցութիւնը իր գագաթնակէտին է Հատել, այնտեղ անհատների գործունէութիւնը ահաղին դեր է խաղում՝ ընդհանրական Հահի տեսակէտից, կարճում է թէ այդ բոլորը հետեւեք է այն բանին, որ պետութիւնը սահմանափակ իշխանութիւն ունի:

Անղղիայում, ճշարիտ է, ասում է ճեր հեղինակը, անհատապաշտական բէթիճը աւելի յարատեց, բայց դա լուկ յապարումն էր: Նորագոյն քաղաքակրթութեան արտաղրած անհրաժեշտութիւններին բաւականութիւն տալու Համար՝ այնտեղ էլ հետզհետէ օրէնքները բաղմապատկուեցան, կեղրնական իշխանութեան ստորագրելները աւելի ճեճ չափով

ճառայ առանձին քան նոյն իսկ Ֆրանսիայում: Կեդրոնացման, խնամակալութեան թափը և օրինազօրի կոյտերը այնտեղ աւելի սաստկացան քան ուրիշ տեղերում:

Դիւպօն-Ուայթը ճեջքերումներ է անում պարլամենտի գործերից, ապացուցանելու համար թէ ինչպէս աստիճանաբար անհատական գործունէութիւնը սանձուած, կանոնաւորուած և կամակերպուած է:

Դրանցով չբաւականանալով, իր թէզի ամրացման համար նա վկայութեան է կանչում, անհատապաշտութեան դպրոցի գլխաւոր օրդան "Տնտեսագէտ"ի ("Économiste") խօսքերը: Սա գրում է. "Մասնաւոր շահի նկատմամբ ճեր տածած վատահոլութիւնը այլևս կարելի չէ խախտել է: Պէտք է հետևենք ծածաքի մեր հարեւաններին և աւելի վատահոլ պետութեանը, քան արել ենք մինչև ցարդ—Դա մի բարձր հարց է, որ մեր թէօրիան վճռուած է բացատրար, սակայն գործնականը՝ դրականապէս: Փորձը ցոյց է տալիս որ հարստութիւն ստեղծող ճարտարագործութիւնները պետական հակակշռի պիտի ենթարկուեն և հասարակութիւնն էլ շարունակ պետութեան միջամտութիւնն է պահանջում այդ նկատմամբ՝ նորանոր օրէնքներով:—Վիվիենը (Vivien) իր "Վարչական Ուսումնասիրութեան" մէջ գրում է. "Տեղական իշխանութիւնները ինչքան որ աւելի են դուրս գալիս անգլիական ազնուականութեան ձեռքերից, այնքան էլ աւելի անհրաժեշտութիւն է զգացում կեդրոնացման սխտէճին մօտենալու":

Որ Անգլիան աւելի վճռական կերպով է մօտենում պետական միջամտութեան եղանակին, դրան մի ուրիշ ապացոյց կարող է ծառայել Լորդ Վէմիսի նախագահութեան ներքոյ կազմուած դաշնակցութեան գործունէութիւնը և պաշտպանած թէզերը: Իրլանդիայի համար՝ Դադաւոնի բուէարկել տուած հողային օրէնքները մի ուրիշ ապացոյց, որ սակայն մի սկզբնաւորութիւն է: Դա մի ճեճ հարուած է սեպհակաւնաւորութեան և ազատ պայմանագրութեան սկզբունքին, ինչոր չարաւ նոյնիսկ Ֆրանսիական սուաջին Յեղափոխութիւնը և ճեքօրը: Այդ օրէնքներով հողերի սեպհակաւնաւոր էր կարող իր վարձակալին վասրել, առանց նրան մի խոշոր գումար վարձատրութիւն առաջարկելու, ինչոր կարուածատիրոջ իրաւունքը այլևս բոլորովին պատրանքի մէջ է դնուած: Նա իրաւունք չունի իր բնահատուցին ենթարկելու վարձակալութեան զինը, վարձակալը այդ մասին միշտ կարող է բողոքել մասնաւոր դատարանների, սրոնք և հաստատում են վարձակալազինը:

Դիւպօն-Ուայթը քննութեան է առնում ոչ-միջամտութեան երևոյթը ընծայող մի այլ երկիր՝ Ամերիկայի Միացեալ Նահանգները: Օրինազօրքը, 38 նահանգների մէջ՝ սարին 20,000 օրինազօրի բուէարկութիւնը,—սրանք բոլորը անվիճելի կերպով հաստատում են պետութեան միջամտութեան յարաճուն բնաւորութիւն ստանալը:

Շուէդիայի մէջ միջամտութեան ընդարձակուող պատկերը ներկայացնելուց յետոյ, հեղինակը ժամանակիչում է Պետական Սօցիալիզմի աստիճանական յաւաքիտարացումը բոլոր կիրթ երկրներում:

Այսպէս, ուրեմն, Դիւպօն-Ուայթը մէկն է այն տեսաբաններից, որ հաստատում է թէ պետութեան ստորագիծները հետզհետէ աւելի ու աւելի ծաւալ են առնում, որքան որ մի երկիր աւելի ու աւելի է բազաքակրթուած:

Պետական միջամտութեան կողմնակիցների փաստերը խտանում են հետևեալ կերպով:

Յառաջադիմութեան հետևանքներից մէկն էլ այն է, որ ազգաբնակչութիւնը հետզհետէ բազմանում է, մարդկանց փոխադարձ յարաբերութիւնները բարդանում և ընդհարումների պարագաները աւելանում: Այդ հանգամանքը ինքնին

անհրաժեշտ է դարձնում, որ պետութեան իշխանութիւնը աստիճանաբար աճի, նրա պարտականութեան շրջանակը ընդլայնուի և կազմաւորութիւնը մեծաճաւալ դառնայ: Իրողութիւն է, որ մարդիկ խուճում, կեցրանանում են ճեճ, մանաւանդ ճարտարագործական, քաղաքներում: Համախմբումների գումարը ահագին չափեր է առնում: Փիղիքական, անտեսական ստեղծագործող նոր ոյժեր են մէջտեղ գալիս: Գործաւորական կեանքը, սրանց կենցաղավարութեան պարագաները, աշխատանքի պայմանները՝ նոր կանոններ և օրէնքներ են անհրաժեշտ դարձնում: Ո՞վ պիտի շահագործէ, կամ իր ուղղակի վերհսկողութեանը տակ առնէ, երկաթուղիները, հանքերը. ո՞վ ուշադրութիւն պիտի դարձնէ որ հարկաւորութեան միջոցները ընդհանրապէս՝ և նաւերը ճանաւորապէս, "շարժուն, միտն դազաղներ" չդառնան: Վաճառականական, ապահովագրական զանազան տեսակի ընկերակցութիւնները, դրամատուները, վարկային հաստատութիւնները կարելի է հասարակական հակակշռի չենթարկել: Շոգին, էլեկտրականութիւնը նորանոր նուաճումներ են անում: Բնութիւնը, իր բազմատեսակ ուժերով, քայլ առ քայլ տիրապետում, հպատակում է մարդուն:—Արդ, այդ բոլորը նոր իրաւունքներ և պարտականութիւններ չէ՞ն բերում պետութեանը:

Յառաջադիմութիւնը ընկերութեան մէջ զարգացնում է բարոյական գիտակցութիւնը և արդարութեան զգացումը: Դա ինքնին փոստ է որ պարտականութիւնը ճշտող նոր օրէնքներ մէջտեղ գան: Այժմս պատուում է այն՝ ինչ որ առաջ անտարբերութեամբ էր դիտուած: Նախկին ժամանակներում բնական համարուածը՝ մեր օրերում յանցանք է համարուած: Հիմա սուզանքի են ենթարկուած, բանա են ուղարկուած արբեցողներին, մինչդեռ առաջներում, օրինակ Հուլիում, այդպիսիները կրօնական պարտականութիւն կատարելու էին ճանչցուած: Նախկին օրերում, մարդ սպանելը մի գործողութիւն էր, որ կարելի էր քաւել դրամական հատուցումով: Այժմս անասունին անգամ չարչարելը յանցանք է նկատուած: Սպարտայում, Հուլիում՝ հայրը ազատօրէն կարող էր արամադրել իր զուակներին կեանքը. նա կարող էր նրանց փողոց նետել, վաճաւել, սպանել, ջնջել, զա իր գործն էր և այդ մասին ո՞չ ոքի պատասխանատու էր: Այսօր ո՞չ միայն հօրը պարտաւորեցնում են իր որդիքանց պահել, այլ պահանջում է որ նրանց բաւականաչափ կրթութիւն տայ: Նրան մինչև անգամ արգիւում են սրտոյը գործի, աշխատանքի ուղարկել՝ մինչև մի որոշեալ տարիք:—Սրանք պետութեան միտաբայի աւելանալուն չէ՞ն ծառայում:

Յառաջադիմութիւնը բարձրացնում է մարդկային արժանապատւութիւնը, նկարագրը, նրանց աւելի բարոյական, բարեկեցիկ դարձնում: Դպրոցներ, ճեճարաններ, համալսարաններ հաստատելը ուղղակի պետութեան վրայ է ծանրանում: Քաղաքակրթութիւն կնշանակի կեանքի բազմադիմի զարգացում: Որքան որ մի կեանք աւելի ներուժ լինի, այնքան էլ նա աւելի օրգաններ կունենայ, ուրեմն և աւելի մեծ թուով օրէնքներ ու կանոններ: Պատմական փաստն այն է, որ կարգաւորուած ամէն ընկերութեան մէջ՝ օրէնք և կանոն սուղը պետութիւնն է: Ազատութեան օրէնքը բանաձևողը և պարտաւորիչ դարձնողը միայն պետութիւնը կարող է լինել: Պետութիւնը ազատութեան թշնամի չէ, ընդհակառակը՝ նրա դաշնակիցը և յաճախ էլ հեղինակն է, որ ձգտում է մարդկային յարաբերութիւնների մէջ աւելի մեծ չափով արդարութիւն հաստատել: Միթէ՞ պետութիւնը չէ, որ ջնջեց սարկութիւնը, ճորտութիւնը և ստեղծեց փոքր սեպհակաւնաւորութիւնը,—յեղափոխական միջոցներով Ֆրանսիայում, զբրամական վերականգնումի պայմանով Ռուսաստանում, Ալբանիայում, Պրուսիայում, Ռուսանիայում և Իռլանդիայում:

Քաղաքակրթութեան յառաջադիմութեամբ՝ պետութիւնը, իր պատուէրներով, բարոյագիտութեան և իրաւագիտութեան ձեռն ուսուցիչն է դառնում: Ընտանիքի ձեռք անդրանկութեան իրաւունքի ջնջումը և հաւասար բաժանման սկզբունքի ներմուծումը թի՛թէ պետութիւնը չէ եղած՝ թէ՛ Անգլիայում և և թէ՛ Փրանսիայում: Գործաւորներին հովանաւորող օրէնքները ամէնքին օրինակ են ծառայում, որ իրենց պարտականութիւնն է նրանց վիճակի բարելաւման ճախին հոգալը: «Մեծ կրքերը ձեռն ազգեր են ստեղծում», ասել է յայտնի Կարնո: Երբ ձեկ ազգի ձեռք տիրում են ձեռն յաւակներ, կրքերը փոթորկում,—դա արտայայտում է իր կառավարութեան վրայ: Ուրեմն մի անշարժ, ծայլ կառավարութիւն յայտարար նշան է ապագայ չունեցող մի ազգի:—Մրանք էլ փաստեր են պետական միասնացի ընդարձակուելուն:

Գալով «Հակա-միջամտականներ»ի այն ղիտողութեանը՝ թէ պետական միջամտութիւնը անհասանելի ջլատում, մեղկացնում, ուժաթափ է անում, սպանում է նրանց ձեռք անհատական ձեռներէջութեան ոգին, ուստի թոյլ պիտի տալ նրանց որ դորձեն, սնորհներ իրենց ուղածին պէս, առանց պետական ու և է միջամտութեան,—դրան Գիւլօն Ուոլթը պատասխանում է այսպէս. «Ենթադրենք մի երկիր, ուր ազգաբնակչութիւնը անհոգ, անզգայ է. կառավարողներն էլ անհոգ, անզգայ են, բնականաբար բոլոր հպատակներն էլ ծոյ են, Պետութիւնը անշարժ է սկզբունքով և բնութեամբ, նա զգուշանում է ժողովրդին ջղազրկելուց, նրան օգնութեան հասնելուց՝ պարտաւորեցման ունէ ձեռն տակ. տիրում է ընդհանուր ձեռնպահութիւն, քնարբութիւն վերելից վար: Գուցէ ընդհանրական այդ անշարժութիւնից մե՛ծ բաներ ծնին, բայց որոշ չէ թէ ի՞նչպէս. իսկ ապագայի գողտնիքը շատ անբախակ է՛:—Միջանկեալ կերպով ասենք որ յայտնի է՛միլ Գը Լավլէյը Գիւլօն-Ուոլթի այդ ղիտողութեանը կըցում է և՛ իր համաձայնութիւնը: Սա ասում է որ ինքը այդ պատկերը տեսած է բուսական Թիւրքիայում, ուր ամէն ինչ դիմում էր դէպի քայքայում: "Հասարակական մի քանի շահեր պաշտպանելու միջոցներ էին ձեռք առնուել, յաւում է անտեսագէտը, շնորհիւ կրօնական գաղափարները և վաղընները Գրանց եկամտի ձեկ մասը յափշտակում են, և լուսացման ջուրը մինչև անդամ Պոլսոյ մզկիթները չի հասնում: Ու Լավլէյը խորհուրդ է տալիս վաղըփայլին կառուածները ծախել, ինչպէս որ, համանման պարագաներում, ցանկանում են արեւմտեան յառաջադիմականները: Գրանով ասելի ձեռն օգուտ տրուած կլինէր ժողովրդին՝»:

Անցնենք մեր խօսքի թելին:

Հիմայ, ամէն տեսակէտով—մեր թէզի բազմակողմանի լուսաբանութիւնը այդ պահանջում էր—մեզ ծանօթ է պետութեան միասնացի կողմնակիցների փաստաբանութիւնը, ինչպէս և իրենց հակառակորդները: Սակայն մեր ասելիքին անմիջապէս հասնելուց առաջ՝ դեռ մեզ մտած է նախապէս պարզել երկու կողմերի հայեացքները պետութեան և սրա էութեան նկատմամբ՝ համառօտ կերպով:

Ինչ է պետութիւն և որո՞նք են նրա պաշտօնները:

Խօսքը միջամտութեան կողմնակիցներինն է:

Պետութիւնը հանրական միւլտիտյն հաստատութիւնների ներքոյ ապրող ճարդկանց ասելի կամ նուազ բազմութիւնը, խմբակցութիւնն է: Ընկերութեան հակադրելով պետութիւն նշանակում է կառավարութիւն, հասարակական իշխանութիւն: Նրա էական միտքն, գլխաւոր պաշտօնն է տիրապետող դարձնել իրաւունքը, պարտաւորիչ անել արդարութիւնը, և դա անհրաժեշտութիւն է դարձնում գործօն ու բազմադիմի միջամտութիւն ընկերային բոլոր կարգաւորումների ձեռք, ուր պատմութիւնից ժառանգ թողնուած ա՛յնքան

անարդարութիւններ կան: Որքան որ արդարութեան և էրանութի հասցիւնը զորո՞ւմ, ճարտար, ընդլայնում է, այժման էլ պետութեան արդարարարական վերանորոգել տեղը մշակում է:

ԲԱՌԵՆՉԼԻ. «Պետութեան իսկական և ուղղակի նպատակն է ազգի բոլոր ընդունակութիւնների զարգացումը, նրա կեանքի կատարելագործումը, լրումն, յառաջադիմական անպակի ընթացքով, որ իրեն չհակադրէր ճարդկութեան հետ, յարգէր բարոյականութիւնը և քաղաքակրթութիւնը:»

Հետևապէս, կարգ ու կանոն, աշխատանք, անտեսութիւն, կապիտալի կաղնութիւն, գիտութիւն, բարոյականութիւն դրանք չեն կարող պետական միջամտութեան չենթարկուել:

Կուր, յափշտակութիւն, անշարժութիւն, թշնամութիւն, որ ուժի թագաւորութեանն են պատկանում, այդտեղ էլ պետութիւնը պիտի գայ իր խօսքն ասելու:

Հազարգակցութեան միջոցները կատարելագործել, երկրագործութիւնը, ճարտարագործութիւնը, վաճառականութիւնը ճարդկեցնել, փոխանակութիւնը ղիւրացնել, աշխատանքի բաժանման վրայ հսկել, ընդհանուր ապահովութիւնը թագաւորեցնել, համերաշխութիւնը անբախելի, կրթութիւն, լուսաւորութիւն տարածել, և այն, և այն, սրանք բոլորը պետութեան գործն են:

Մի խօսքով՝ տալ օրէնքներ, որ անհասանելի միջոց ունենան, իրենց ջանքերով, հասնելու իրենց աշխատանքի անբողջական պտուղին և իրենց ընդունակութիւնների կատարեալ զարգացմանը:

ՊՂԱՏՈՆ—Եթէ Պետութիւնը կատարեալ լինի, դրա հետևանքը կլինի անհասանելի կատարելագործումը, որովհետև նրանք պետութեան բազմացուցիչ ճասերն են:

Անհատապաշտների պատասխանը:

Վատ կառավարութիւնները՝ պատերազմներով, կազմակերպում յափշտակութիւններով, անարդար կերպով բաշխուած չափազանց տուրքերով այնքան չարքներ են հասցրել ճարդկանց, որ ո՛չ միայն ազատական դպրոցին պատկանող անտեսապէսները, այլ շատ պատմաբաններ, փիլիսոփաներ, մտածողներ, քաղաքագետներ ցանկացել են որ ինչքան կարելի է պետութեան գործունէութիւնը սահմանափակուի: Կանտ, Ֆիխտե, Լուսթրի, Մակոլէյ, Մօզլ, Էսթիս, Հերբերտ Սպենսեր փաստում են, որ պետութիւնը միայն պիտի երաշխաւորի անհատի իրաւունքները:

Անհատապաշտների կարծիքով պետութիւնը մի քաղցկեղ է, որ լափում, ծծում է ժողովրդի ուղն ու ծուծը:

ԺԻԻԼ-ՍԻՄՕՆ. «Պետութիւնը պիտի աշխատի որ ինքը աւելորդ դառնայ և իր հրաժարականը պատրաստի:»

Ինչո՞ւ.—Եթէ ճարդիկ պարզ կերպով հասկանային իրենց շահը, ճանաչէին իրենց իրաւունքը և պարտականութիւնը, նրանք ինքնաբերաբար կանէին այն, ինչ որ պիտի անէին, ինչ որ պէտք էր անել: Անհասանելի զարգացումով պետութեան բուսականութիւնը ո՛չ միայն անհրաժեշտութիւն չէ, այլ դառնում է աւելորդ: Պետութեան ջնջում,—այդ ժամանակը միայն կլինի ճշմարիտ, բացարձակ ազատութիւնը, երբ անհատը ազատ, անկաշկանդ կլինի անելու, գործելու այն, ինչ որ լաւ է: Ուրեմն, ինչքան որ ընկերութիւնը յառաջադիմի, պետութեան գործօն դերը պիտի պակասի: Ժամանակակից պետութիւնը, ի թիւս այլոց, բերում է հետևեալ անյարձարութիւնները.

1. Նա իր յանձնառութիւնները չի գործադրում արագ և ո՛չ էլ արժան:

2. Ծոհճաշահութիւնը (նեկօտիլոմ), օճանականութիւնը (Ֆալօրիալոմ), քաղաքական կուսակցութիւնների պահանջները վախճան չունին: Պետութիւնը ոչ միայն շատ անզգած

անօգուտ գործեր է կատարում, այլ օգտակարներն էլ շատ վատ կերպով պատրաստում:

3. Պետութիւնը ոչ ճիշտն անհասկանալի ճնշում է շահագործման է ենթարկում, այլ նրանց վարժեցնում է իրեն վստահելու ու այրալիսով նրանց դարձնում է անշարժ, կամագուրկ մեքենաներ, կայն, կայն:

Մենք ամենայն համբերութեամբ, լսեցինք ժամանակակից պետութեան վարիչները երկու կողմնակիցներին էլ: Դրա պարզ եզրակացութիւնն այն է, որ մէկը ընդունում է «Ոստիկան—պետութեան» տեսութիւնը, իսկ միւրը՝ «Նախախնամող—Պետութեան»:

Մէկի մէջ պետութիւնը սահմանափակում է անհատական երաշխաւորութիւնը սպառնալից իսկ միւրը՝ իւրաքանչիւրին տալ անհրաժեշտը և օգտակարը:

Առաջինը անհատապաշտներին է, իսկ երկրորդը, զըլխաւորապէս, անտեսազիտական պատմական դպրոցի և պետական սօցիալիզմի պաշտպաններին:

Այս անհրաժեշտ պարզաբանութիւնները յետոյ՝ անցնենք մեր ասելիքին:

Թիւրքիան գտնուած էր վերածնութեան օրերում. մեկ հեռաքրքրողը այն էր՝ թէ այս երկրի պատասխանատու, պետութիւնը վարող ոյժերը և ճարմինները ի՞նչպէս են ըմբռնում վերանորոգելիք Թիւրքիայի պետականութեան տեսութիւնը, նրա պաշտօնը և ստորոգելիները:

Մենք երկար կանգ առանք ոչ-սօցիալիստ մտածողների թէպէրի և տեսութիւնները վրան, որպէսզի ցոյց տանք թէ՛ նորագոյն պետութեան անունով խօսող երկու տիրող հասանքներից իւրաքանչիւրի պաշտպանները ի՞նչ մի առանձին ուղղութիւն են ուղղւում տալ պետական գործերին՝ իրենց շահագործող և առաւելագոյն հեռապահումների մէջ:

Եթէ չէինք կարող պահանջել, որ վերածնելիք Թիւրքիայի անմիջական դերակատարները սօցիալիստներ դառնային, պէթ, պիտի ուզէինք նրանց տեսնել մի որոշ ուղեգծի վրայ, որպէսզի հնարաւորութիւն ունենայինք շատ ու քիչ ծառայող գաղափար կազմելու գուրդէ մասին: Լինելէս, եթէ իր ամբողջութեամբ չի կարող առաջուց յայտնուել, պէթ նրա գլխաւոր գծերը կարող են ընդհանրաւորել:

Թիւրքիայի քաղաքական, անտեսական, օրէնսդրական, վարչական, ընկերային... մի խօսքով՝ պետական բոլոր արտադրանքները ինչպէս են, մինչև ցարդ, մի որոշ սխառտէմ, մի որոշ ուղղութիւն երևեցած պիտի լինէր, որպէսզի զրական կերպով արտացոլանար շահագործող պատկերը: Նման պարագաներում այդպէս է եղած ուրիշ երկրների մէջ:

Արդ, զարգացման, քաղաքակրթութեան նորագոյն փուլի մէջ մանուկ «սահմանադրական» Թիւրքիան ի՞նչ ուղղութիւն է ուղղւում առնել: Նրա պետական հաստատութիւնները ի՞նչ դրոշմ պիտի ընդունեն: Գործն ոյժերը ի՞նչպէս են հասկանում այս երկրի մնայուն իրողութիւնների բնաւորութիւնը և ըստ այնմ էլ արտադրում: Պետութեան ստորոգելիները ընդարձակելուն, թէ՛ կրճատելուն կողմնակից են երկուսից ո՞րը:

Եթէ անհատապաշտների թէօրիան էին նախընտրում, ապա «սահմանադրական» Թիւրքիան իր է՛ն առաջին, է՛ն գլխաւոր գործը պիտի անէր ընդհանուր սպառնալիցութիւնը հաստատուն դարձնել, անհատական տղատութիւնների, անհատական ձեռներեցութիւնների առաջ լայն դռներ բռնար: Սահմանադրական կարգերը յամբարէն կընթանան, բաց չնախ պէտք է որ ընթացք առնեն: Վերանորոգման շաղի մէջ մտնող մի երկրում, անհատական ձեռներեցութիւնը գեւ ևս որոշեալ դեր կարող է խաղալ, Թիւրքիան այդ տեղից կարող էր օգտուել, եթէ անսպառնալից, անստուգութեան ուրուականը այս երկրի հորիզոնից հեռացնէր: Ել ինչու

բանակի ահազին բազմութիւն, երբ նա չի երաշխաւորում գէթ ներքին, քաղաքացիական ու քաղաքական սպառնալիցութիւնը. էլ ինչու պետական այդ բարդ և բազմաձախ մեքենան, երբ ամենատարրական խնդիրներն անգամ չեն վճռւում: Եթէ աւելի քան երկու տարուայ սահմանադրական կեանքը քիչ էր մի կարգ պետական բարդ խնդիրներ լուծելու, նա շատ էր աղահոգութիւնը, հատկապէս թագաւորեցնելու: Դժբաղդաբար, իրողութիւնը ասում է, որ պետութիւնը ո՛չ թէ կեանքի և գոյքի սպառնալիցութիւն, համեմատաբար չտեսողեց, այլ նա ինքը պատճառներից մէկը եղաւ գոյութիւն ունեցող երկրայ ախուր իրականութեանը: —Քաղաքացիներին խողտողում են, օրը ցերեկով ճորթոտում, նրանց գոյքերը յափշտակութեան մատնում, և պետութիւնը խուլ ու յամր է ձևանում: Բայց միայն այդ չէ: Յափշտակում է և՛ ինքը՝ պետութիւնը: Մեր օրօք, սահմանադրական մի երկրի մէջ, պետական հարկերի գանձման համար՝ զիւրացու անհրաժեշտ գործիքների և նրա սպրուտի պայմանները սուտղ ճիշտների, ինչպէս և միւս կատեգորիայի քաղաքացիներին, վաճառ հանելը կատարելապէս կազմակերպւած պետական յափշտակութիւն է. այդպէս կճատէ ամէն նա, որ կաշտպանէ պետութեան ստորոգելիների կրճատման գաղափարը:

Եթէ պետութեան իրաւունքները սահմանափակելու կողմնակից յայտարարելին իրենց, այս երկրի ղեկավարիչ ոյժերը,—նրանք անմիջապէս պիտի ջնջէին աւատակետական կարգերի բոլոր մնացորդները: Այդ պիտի լինէր, որպէսզի անհատական ազատութիւնը թուրք առնէր և մեռելները կենդանիներին չկաշկանդէին: Պետութիւնը ո՛չ միայն այդ չարաւ, այլ նա ձգտեց աղաների, բէկերի տնտեսական տիրապետութիւնը աւելի ամրապնդել: Նա ցերեպին խարականութիւնը աւելի բարձրացրեց—Արդարադատութիւնը կաղ է, նա իր խակական ուղիին մէջ չէ, երբ վերածնուող մի երկրի մէջ անմիջապէս չի ձգտում պատճառական անարդարութիւններին վերջ տալու: Երբ բռնապետութեան օրօք մնացած մի կարգ կենսական խնդիրներ չվճռուեցան, մնացին առաջուան դրութեան մէջ, այդտեղ խօսք կարող է լինել արդարութեան հաւատարմութեան այն ստեղծիչ ոյժի մասին, որ նա պիտի առնենար վերածնուող մի երկրում: Այդ ուղղութեամբ պետական արարքների մէջ կա՞ր մի որոշ մտածմունք, որ համապատասխանէր շահագործող գաղափարին:

Անհատապաշտական թէօրիայով եթէ առաջնորդուէին, պէտք է թոյլ տային, որ բարկացուցիչ ազգութիւնները իրենց ինքնավարական, իրենց սեպհական, իրենց պատճառական հատկանիշներով վերաբերող բոլոր գործերի մէջ ազատ, անկաշկանդ յառաջ երթային, երևան դնէին իրենց ընդունակութիւնները և ձեռներեց ոգին:—Պետութիւնը ո՛չ միայն այդ չարաւ, այլ ձգտեց կրճատելու նրանց անհրաժեշտ և անձեռնմխելի իրաւունքներն անգամ:

Անհատապաշտական թէօրիայով եթէ ծոռեկաւ լինէր վերածնութեան օրերում գտնուող Թիւրքիային, մենք այնտեղ սխառտէմաւթք, դրական ո՛չ չինք չենք կարող գտնել,— ամէն ինչ կցկատուր, անյարակից, առանց օրգանական ներքին կապերի: Այդպէս է եղած՝ պետական բոլոր արտադրանքները ինչպէս են:

Հիմայ խնդիրներին ծոռեկանք միւս հոսանքի տեսակէտից:

Քաղաքակրթութեան զարգացումով պետութեան միակն բազմապատկում է.—նորագոյն Թիւրքիան այդ փաստը որոշ կերպով երևան դրած պիտի լինէր, եթէ իրերը ընթացած լինէին այդ ըմբռնումով:

Կարլ Մարքսը բանաձևւած է. ”Ճարտարագործապէս ա-

ձեռնից աւելի զարգացած երկիրը իրեն հետևող երկրներին ցոյց է տալիս նրանց սեպհական սպազայի պատկերը՝ Ծարտարագործական աստիճանի զարգացման տեսակէտով:

Նորագոյնի ճէջ ճանող մի երկիր զարգացման, յառաջխաղացման բնականոն ուրիշ աստիճան, ուրիշ փուլ չէր կարող ունենալ, քան ինչ ունեցել են իրենից աւելի յառաջադէմները: Բնաշրջական օրէքները բացառութիւն չունին՝ ընկերային առողջ կարճաւորումների նկատմամբ:

Մի երկիր քաղաքական խկական ձևափոխութեան է ենթարկուած, երբ տնտեսապէս նա արգէն ձևափոխուել է: Տնտեսականը պէտք է կանխի քաղաքականին. առաջինը պատճառ է, երկրորդը՝ արդիւնք, հետևանք: Երբ տնտեսական ձևերի յեղաշրջում չկայ, քաղաքական փոփոխութիւնը ինչ սահմանների մէջ էլ լինի, կմնայ ճակերևութային, դուրկ իրական հիմունքներէ:

Չարգացման նոր փուլի, վերածնութեան մէջ թևակոխող նորագոյն Թիւրքիայի յառաջադիմութեան յաջորդական աստիճանը պիտի լինէր կապիտալիզմի տիրապետութիւնը: Պատճառութիւնը թուէր չունի Կապիտալիստական զարգացումը մէկն է այն անհրաժեշտ փուլերէ, որով ճակատագրականապէս պիտի անցնեն ձևափոխուելիք բոլոր երկիրները: Նահապետական, աւատապետական Թիւրքիային պիտի յաջորդէր կապիտալիստականը: Ուղին է այս, որ չի կարելի աչքի առաջ չունենալ, երբ բնականոն զարգացումն կայ, յայտնի բան է:

Նկատի ունենք տնտեսական զարգացման այն խառնափրնթոր, խաչաբղէտ դրութիւնը, որի մէջ գանուած է ժամանակակից Թիւրքիայի ամբողջութիւնը: Խնդիրն այն է, որ նրանք, որոնք ուզում էին վերածնուած Թիւրքիա ունենալ և իրենց կողմնակից էին յայտարարում պետութեան միասնացի ընդարձակմանը, ոչ միայն իրենց առաջին գործը պիտի անէին հիմնապէս տապալել աւատականութեան մնացորդներին, ինչպէս արեցին համանման պարագաներում գանուող ուրիշ երկիրները, այլև դիւրացնէին կապիտալիստական կարգերի նուաճումը: Մինչդեռ այս ուղղութեամբ աչքաուռ մի բան երևան չէկաւ:

Արտադրութեան կապիտալիստական եղանակի մէջ տիրող է "Յեւթարկա-Ռեւան օրէքը": Վերածնունդի մէջ գտնուող մի պետութիւն այդ ճախին խօսք ունէր ասելիք:— Նա իր միասնան երևան չբերեց:

"Գործակցական բեթի՞ն" իր բոլոր տեսակներով, պետութեան կողմից պիտի խրախուսուէր թէ՛ ճանաւոր օրէնքներով և թէ՛ դրամական աջակցութեամբ:— Դարձեալ բացակայութիւն պետութեան կողմից:

"Քրեւրեւր-Ռեւաները" իրենց բոլոր ձևերի և արտայայտութիւնների մէջ, կապիտալիստական շահագործման և արտադրութեան եղանակի էութիւնն են կազմում:— Դրանք էլ պետութեան նորագոյն հասկացողութեան բաժինը չկազմեցին:

Թիւրքիան գերազանցապէս երկրագործական երկիր էր, լի հարուստ հանքերով, անձշակ վայրերով: Նա կապիտալիստական եւրոպայի շահագործման շահաստանն էր նկատուած:— Ծարտարագործական, երկրագործական, հարստութիւն ստեղծող բոլոր եղանակների մէջ՝ ժամանակակից պետութիւնը որոշեալ դեր է ստանձնում:— Նորագոյն Թիւրքիայից խօսող ազգայինները այդ ուղղութեամբ որոշեալ դիրք չգրուեցին:

Վերածնունդի մէջ գտնուող թիւրք պետութիւնը չունեցաւ իր արտադրական որոշ առաջադիմութեամբ: Նա քայլից նախկինի արահետով, առանց ճառածելու որ նորագոյնի անունով է խօսում:— Պրուսիայից սպազայացման քաղաքականութիւնը չտեսնի փութկոտութեամբ փոխ առնող նորագոյն պետութիւնը աւելի լաւ պիտի անէր, եթէ նրա

պետական, տնտեսական քաղաքականութեան այն ճախն էլ փոխ առնէր, ինչ որ վերաբերում էր երկաթուղիների և հանքերի շահագործմանը:

"Սահմանադրական" կառավարութիւնը իր ուշքը բացառապէս կեդրոնացրեց ցամաքային և ծովային ուժերի վերայ: Առհասարակ բնազդը այդտեղ ակնառու էր: Նացիօնալիզմը նրան միայն այդ կողմը ուղղելու կորովամտութիւնը ունեցաւ:

"Բանակ" ի միասնում, մեզ ասում է ոչ-սոցիալիստ տեսաբանը, կայանում է "երկիր", "հայրենիք" ը պահելու, պաշտպանելու "օտար" ի, "գրսի" տիրապետութիւնից: Բայց հարց երբ այդ "օտարը" գրսից գալիս է և ներսից տիրապետում է երկիրը՝ նրա տնտեսական շահագործումը իր ձեռքն առնելով, այդտեղ բանակը այլևս աւելորդ յոգնութիւն չանձն չի՞ առնում, քանի որ նա միասն է ստանձնում պահելու, պաշտպանելու այն օտարի տիրապետութիւնը, որի կարծեցէպ թշնամին է ինքը: Բայց և որի խկական բարեկամը և աջակցն է՝ ինչ որ վերաբերում է ոչ-սոցիալական տարրերի շահագործմանը: "Օտար" ը շահագործում է, "տեղական" ը բողբոս է, նրան ստում են յանձնուել օտարի "գութին" և "ողորմածատրութեանը". եթէ մի քայլ էլ յառաջ, ապա՝ սուին, գնդակ: Իսկ երբ նոյն այդ պետութեան ասում են թէ աւելի լաւ չէր լինի փոխ առած դրամներով և՛ նպաստել, ստատրել երկրի արտադրող ուժերին,—այդ ճախն նա լուծութիւն է պահում. մինչդեռ հէնց այդտեղ էր, որ ինքը եռանդուն կերպով գործունէութիւն ցոյց պիտի տար:

Պետութիւնը ոչ միայն ազատ դուռ պիտի բանար օտար, արտաքին կապիտալի ներմուծմանը, այլ նա ամենամեծ չափով դիւրութիւն և աջակցութիւն պիտի տար տեղական կապիտալի փթթումին. և ինքը իր դանձարանից օգնութեան պիտի հասնէր արտադրող ուժերին, լինէին նրանք անհատական, լինէին՝ հաւաքական Կապիտալիզմը, իր դրական և բացասական կողմերով, իր բոլոր երեւաներով, սեպհական քաղաքակրթութեամբ և ստորագիւններով այս երկրի մէջ տիրապետող լինելու անխուսափելի, ճակատագրական, պատճառական իրաւունքը պիտի ունենար,— դա պիտի ճանաչէր "սահմանադրական" պետութիւնը և իր նացիօնալիստական գինին մի քիչ ջրախառնելով՝ այդ ուղղութեամբ հրամաններ արձակէր և կարգադրութիւններ անէր և թոյլ չտար որ աւատապետական մեռելները փառած կապանքներով նորերին շահագատէին և սրանց յառաջխաղալուն արգելք լինէին:

ԵԶՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. — Վերածնունդի մէջ օրէքի մէջ գործող թիւրքական շահեցում իր որոշ պետական ինտերես. և որոշ համար էլ՝ որոշ անարտադրական:

"Յառաջադիմութիւն բառը... կրկնակի լմաստ ունի, ասում է Ռըվլէն: Մի կողմից դա նշանակում է ընկերային պարզ ձևից՝ ընկերային բարդ ձևի անցնելը, և միւս կողմից՝ դա իր մէջ բովանդակում է կատարելագործութեան և բարելաւութեան գաղափարը:"

Սահմանը և նկատողութիւնը ճիշտ է ու ժամանակակից:

Թիւրքիայի իրական վերածնութեան համար աշխատողները միանգամ ընդմիշտ պիտի հասկանան, որ այս երկիրը պիտի ճանի կապիտալիստական արտադրութեան եղանակի մէջ: Նա արդէն Ռեւաներ է ոչ-բեթի՞ն մէջ: Հարկաւոր է միայն անցեալի մնացորդները ջնջել, որպէսզի ՆՈՐԸ իր թեւերը լայն և առանց արգելքի բանայ:

Թիւրքիայի վերածնութեան անունով անօրինութիւններ անող պատասխանատու պաշտօնական ազգայինները, այս օրերիս մէջ, ամէնից յաջող քաղաքագիտութիւնը գործադրած կլինէին եթէ ընդգրկէին Պետական Սօցիալիզմի սկզբունքները:

Ժամանակակից Թիւրքիան ճիւղաճիւղից չենք կարող վերածել Սօցիալ-Դեմոկրատական կարգերի, դա պիտի գայ անպայման, դա վարուան անխուսափելի կեանքն է, որ արդէն ունի իր գործիչ ազգակիները և արտայայտիչները, բայց այս օրոք կեանքի պատասխանատու գործօնները ամենայն Համարձակութեամբ կարող են գրկել և գործադրել Պետական Սօցիալիզմի դադարները, որ գիտական սօցիալիզմի նախնականն է. սրա ճանապարհները յայտնի աստիճանով և որոշ խնդիրներով Հարթուր:

Թիւրքիայի ժամանակակից, պատմական այս ընդհանրապէս «կատարելագործուածը և բարելաւուածը» ճիւղի կարելի է պաշտպանել Պետական Սօցիալիզմի ազատ, Համարձակ ընդգրկումով: Պետական անձնաւորութիւնների և Հաստատութիւնների ճիշտ գաղափարները այդ ուղղութեամբ կարող են գործել, որպէսզի խնդիրները առաջադրուած կարգադրուեն, ճիշտ որ գայ սօցիալիզմի յաղթական տիրապետութիւնը, որ այլևս ներկայ պետական այս և այն թէօրիւնների պէտքը չի լինի:

Ս. Ս Ա Պ Ա Հ — Գ Ի Ի Լ Ե Ա Ն

Ք Ա Ղ Ա Ք Ա Վ Ա Ն Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

Բ Օ Յ Տ Ե Մ Ի Տ Ե Ս Ա Վ Յ Ո Ւ Թ Ի Ի Ն Ե Լ

Կապիտալիստական Եւրոպան, իր ճարտարապետական գերարտադրութեան Համար պէտք ունի միշտ նոր շահաստաններու, նոր երկիրներու: Եւ ներկայ եւրոպական կառավարութիւնները, որոնք ո՛չ այլ ինչ են, եթէ ոչ անտեսապէս տիրապետող դասակարգերու յանձնակատարները, նոր յաճախորդներ և վաճառատեղիներ գտնելու Համար ստիպուած են Հետեւի նրաւաճողական քաղաքականութեան մը, որ կարտայայտի իրենց Հետապնդած գաղութային քաղաքականութեամբը: Ահա՛, այդ քաղաքականութեան շնորհիւն է, որ Հեռաւոր և Մերձաւոր Արևելքը, ինչպէս նաև աշխարհի բոլոր այն մասերը, որոնք գուրկ են ճարտարագործական արտադրութեան միջոցներէ, և տակաւին կը խարխափին աւատականութեան և մանր արտադրութեան լափերինթոսին մէջ, կը նաւաճին նախ՝ անտեսապէս, և կարճ ժամանակ վերջն այլ քաղաքականապէս, ու այդպիսով կը դառնան մշտական յաճախորդները եւրոպական ընչաքաղց կապիտալիստներուն, որոնք շատ անգամ միլիոնաւոր պրօլետարներ կառաջնորդեն դէպի շահագործման դաշտը, դէպի սպանդանոց՝ կարենալ պահպանելու Համար իրենց արդէն ձեռք բերած շուկան, որ Հետզհետէ աճող տրանսպորտական պաշարի շնորհիւ Հակաշահ մրցակիցներու կողմէն գրաւելու ենթակայ է միշտ:

Ընդհանուր այդ մրցումի մէջ իրենց մասնաւոր տեղն ունին գրաւած Մեծն Բրիտանիան, Փրանսան և Միացեալ Նահանգները: Մեծն Բրիտանիան ա՛մենաշատ և ա՛մենահարուստ գաղթականները ունեցող միակ պետութիւնն է, որ աշխարհի Հինգ մասերուն

մէջ ալ ունի միլիոնաւոր մղոններու տարածութեամբ ընդարձակ երկիրներ, որոնք կը կազմեն Անգլիոյ կապիտալիստական Հարստութեան, Մեծութեան և Հզօրութեան գլխաւոր սիւները: Անգլիան ըլլալով ծովային պետութիւն մը, շատ լաւ գիտէ, որ Մալթերէն Հաղարաւոր մղոններ Հեռաւորութեան վրայ դանդաղ գաղթականները օտար յարձակումներու դէմ պաշտպանելու Համար կարիք ունի ուժեղ նաւատորմի, զոր և ունեցաւ երկար ատեն, կրելով իրաւամբ «Մովերու Թագուհի» տիտղոսը:

Սակայն Հետզհետէ անտեսական ընդհանուր մրցումին մասնակցեցան Ռուսաստանը, Գերմանիան, ինչպէս նաև եւրոպական միւս պետութիւնները: Ասոնցմէ ա՛մենէն ահարկու մրցակիցը Հանդիսացաւ Գերմանիան, որ իր Միութիւնը ձեռք բերելէն յետոյ, որ ըստ օրէ Հզօրացաւ և իր անտեսական նաւաճումները ա՛յն աստիճան յառաջ տարաւ, որ նոյն իսկ Անգլիա երկու անգամ աւելի ապրանք կը ներմուծէ և կապառնայ նոյն նաւաճումները ընել նաև անգլիական դանազան գաղթականներուն մէջ:

Միւս կողմէն Ռուսաստանը շնորհիւ իր միլիտարական գերակշռող ոյժին և նորածագ կապիտալիզմի արագընթաց աճմանը միշտ սպառնալիք կը մնար Հնդկաստանի Համար, որ Անգլիոյ Հարստութեան սիրտն է: Հետեւաբար գոռոզ Ալպիօնի դիւանագէտները, Հետեւելով իրենց պատմական քաղաքականութեան, աշխատեցան և յաջողեցան «շագանակը ուրիշներու ձեռքով կրակէն դուրս Հանելու»: Այսպէս, Փրանսայի գաղութային քաղաքականութեան մահացու Հարուած տւին Գերմանիոյ Հեռ կուսակցներով և Մատակապարի ու Մարօքի կիսաանկախութիւններու ենթարկելով գաշն: Ճարտար մեքով խորտակեցին Ռուսաստանի ոյժը՝ երկար ժամանակով մերկայեցնելով գաշն Հնդկաստանի վրայ ունեցած իր յոյսերէն: Ապա՛ բարեկամական սերտ յարաբերութիւններ մշակեցին Աւստրո-Հունգարիոյ և Իտալիոյ Հեռ՝ Գերմանիան կրկնացնելու Համար, և մինչև անգամ Հաշտութեան ձեռք մեկնեցին պարտուած Ռուսաստանին՝ Գերմանիան ջախջախելու նպատակով: Եւ ահա՛, պատմական երեք Հակառակորդներ, — Փրանսա, Անգլիա և Ռուսիա — կողմեցին «Երբեակ Համաձայնութիւն» մը ընդդէմ «Երբեակ Նիդերլանդներուն»: Այդ «Համաձայնութիւնը» փորձաքարի ենթարկեցաւ Ալժէիրասի մէջ և փրկեց Փրանսան անխուսափելի նոր պարտութենէ մը: Սակայն Անգլիոյ աշակերտ Գերման գիւնադէտները ըսկրան գերագանցել իրենց վարպետները և առաջնորդելով «Իրաւունքը Հզօրագոյնինն է» թէօրիստով, կատարեալ անկարութեան մասնեցին «Երբեակ Համաձայնութիւն»ը, ինչպէս որ երևան եկաւ Պոնա — Հէրցեգօվինայի Թիւրքիայէն անջատման պարագային, որ ժամանակ Աւստրո-Հունգարիան կռթնած՝ Գերման բանակի տիրապետող ոյժի վրայ, բացէ ի բաց յայտարարեց թէ՛ տեղի չ'ալիտի ապա եթէ նոյն իսկ

պատերազմը ըլլայ անխուսափելի: Եւ «Երբեակ Հա-
մաձայնութիւն»ը տեղի տուաւ, տեղի տուաւ, որով-
հետեւ բազմապատկեց պետութեանց շահերը Համանը-
ման և Համաձայի չէին և անոնցմէ ո՛չ մէկը կուզէր
պատերազմի միւսի «Համաձայութեան» պրէստիճը
արտաքուստ պահպանելու համար, քանի որ խնդրոյ
առարկան, իր պետական շահի տեսակէտէն, առանձ-
նապէս էական նշանակութիւն չունէր, մինչդեռ Գեր-
մանիոյ և Աւստրո—Հունգարիոյ Համար ատոր ճիշդ
Հակառակն էր, որով և այդ երկու պետութիւնները
ներկայացան որպէս միաձուլ զանգած և տարին յաղ-
թանակը: Գիւստաւիտութեան մէջ, ներկայ օրերուն,
սովորաբար յաղթութեան դավինները կը խլեն անոնք,
որոնք ունին վերակշիռ ՌՅԺ, ինչ որ կապիտալիս-
տական իմաստութեան սկիզբն ու վախճանն է:

Գերմանիան և Աւստրո—Հունգարիան այսօր տի-
րապետող ոչ ոք կը ներկայացնեն ցամաքի վրայ, և եթէ
կայ պարագայ մը, որ մտածել կուտայ այդ պետու-
թիւններուն երոպական պատերազմ մը չ'զրգուելու,
գա՛, Անգլիոյ նաւատորմը և Փրանսայի զրամն է:
Գերմանիան շատ լաւ գիտէ, որ պատերազմական շե-
փորը հնչելէն ոչ շատ ուշ, Բրիտանական նաւա-
տորմը պիտի յաջողի ջախջախել Գերմանիոյ ծովային
ոչ մը և Գերման նաւահանգիստները պիտի մնան ան-
պաշտպան, իսկ Փրանսական բանակը այժմ արհա-
մարհելի ոչ մէ չի ներկայացներ, երբ մանաւանդ միացած
ըլլայ Անգլիականի հետ: Այս իսկ պատճառաւ, թէ՛
Գերմանիան և թէ՛ Աւստրիան ոչ մը կուտան իրենց
նաւատորմին՝ նիւթական անտանելի զոհողութեանց
գնով, քան իրով պրօլետար դասակարգի արիւնը: Գեր-
մանիան արդէն կը Համարել ծովային երկրորդ ուժեղ
պետութիւն մը, իսկ Աւստրիան, իր ունեցած ոչ մի
վրայ որոշած է աւելցնել 18—20000 թօնեոց 15
մարտանաւեր ևս: Թէ Աւստրիան ո՞ր աստիճան մը-
տահոգած է իր նաւատորմի օր առաջ ուժեղանալուն
համար, կարելի է հետեցնել սա Հանգամանքէն, որ
յիշեալ 15 մարտանաւերու շինութեան մասին, ճո-
վակալ Մոնթէպուզօլին, ամբողջ պատասխանատու-
թիւնը իր վրայ առնելով, հրահանգ տուած է՝ առանց
սպասելու Պատգամաւորութեան (Délégation) արտօ-
նութեան: Իսկ դեր—ճովակալ Բիարի այդ առթիւ
յայտարարութեամբ մը պաշտպանելով Մոնթէպուզօլին,
սապէս կը վերջացներ իր խօսքերը.—

»Աւստրո—Հունգարիոյ Համար աւելի լաւ է բնաւ
նաւատորմ չունենալ, քան ունենալ այնպիսին, որ պա-
տերազմի առաջին օրն իսկ պիտի խորտակուի թշնամ-
ւոյ կողմէն: Եթէ անհրաժեշտ նկատուած 15 մարտա-
նաւերը չ'պիտի շինուին, այդ պարագային աւելի լաւ
է ծախել մեր ներկայիս ունեցած 6 մարտանաւերն ու
թօրփիլանաւերն ար: Եւ վստահ եղէք որ գնդակներ
անպակաս են: Ուրիշ կերպ վարձուք աննպատակա-
յարմար է»:

Միւս կողմէն Անգլիան շատ լաւ գիտնալով Աւ-
ստրո—Հունգարիոյ նիւթական կարողութեան չափը,
և Հակառակ այդ բանին, իր նաւատորմի համար ը-
րած ահապին զոհողութիւնները, և այս բոլորի Գեր-
մանիոյ կողմէն թելադրուած ըլլալը, ինքն ալ իր կողմէն
յառաջ կը տանի սպառազինութիւնը՝ միշտ պահպա-
նելով երկու պետութեան կշիռը:

Այսպիսով անարին պատերազմը կը շարունա-
կուի ծծելով ժողովրդի կենսալից հիւժը, քաղաքայնով
անոր անտեսական վիճակը և մահացու հարուած
տալով քաղաքակրթութեան յառաջխաղացումին: Եւ այդ
անարին պատերազմը պիտի շարունակուի ա՛յնքան
ատեն, մինչև որ զարթնող պրօլետարիատը իր սե-
փական ոչ մի վերջ դնէ անոր:

Ռուսաստանը երկար ատեն չ'պիտի կրնայ ու-
նենալ իր կորսնցուցած ծովային ոչ մը և ստիպուած
պիտի ըլլայ մնալ ցամաքային պետութիւն մը: Եւ
թէ և իրեն համար մեծ նշանակութիւն ունին Փրան-
սայի զրամը և Անգլիոյ ծովային ոչ մը, սակայն միա-
պետական Ռուսիոյ Համար անտանելի են այդ երկիր-
ներու դեմոկրատական հակումները, իսկ Գերմանիոյ
և Աւստրիոյ միապետական կարգերը շատ աւելի հա-
ճելի են: Միւս կողմէն, Գերմանիան Մերձաւոր Արեւ-
ելքի մէջ կ'ամբապնդէ իր անտեսական տիրապետու-
թիւնը, որ քաղաքականի ռահահարթն է, և իր թիւ-
լալրութեամբ, Թիւրքիան կը միջամտուի Պարսկական
գործերուն, որով Ռուսաստանի շահերը կը վտանգուին
թէ՛ Թիւրքիոյ և թէ՛ Պարսկաստանի մէջ: Այս բոլոր
անախորժ դէպքերը մտածել տւին Ռուսիոյ, որ ըս-
տիպէցաւ տեղի տալ Գերմանիոյ առաջ, փոխել իր
քաղաքականութիւնը և զոհել այդ քաղաքականու-
թեան հոգին եղող Իդիօսկին, ինչպէս Փրանսան Ալ-
ժեպիրասէն յետոյ ստիպուեցաւ զոհել Տէլքասէն՝ խու-
սափելու համար հաճի Վիլհելմի վրէժնորդութենէն:

Եւ ահա՛, տեղի կունենայ Բօցտամի տեսակցու-
թիւնը, ուր երկու միապետներ Հաշեյարգարութիւն
կրնեն՝ վերածնուող Թիւրքիոյ և Պարսկաստանի մէջ
իրենց ունեցած անտեսական և քաղաքական մի շարք
կենսական խնդիրների վերաբերմամբ:

Եթէ Բեյպիլի մէջ երկու Հակառակորդներու—
Անգլիոյ և Ռուսիոյ—մերձեցումի պատճառաւ յեղա-
շըրջուեցաւ Բռնապետական Թիւրքիան և վերահաս-
տատուեցաւ «Միզաթեան Սահմանադրութիւնը», քա-
րակոյս չ'կայ որ Բօցտամի մէջ կատարուած մերձե-
ցումէն ալ պիտի ծնին շատ մը անակնկալներ, որոնք
հիմնական փոփոխութիւններ պիտի յառաջաց-
նեն Թիւրքիոյ մէջ, եթէ Վարիչ Մարմինները չ'ըմ-
բռնեն ըրպէի փափկութիւնը և ըստ այնմ չ'վարեն
այս երկրի ներքին և արտաքին քաղաքականութիւնը:

Հին և Նոր Թիւրք քաղաքագէտները ա՛յն սխալ
կարծիքը ունեցած են թէ՛ Գերմանիան Թիւրքիոյ բա-
րեկամ է: Չէ՞ որ Վիլհելմը յայտարարած է զինք

«Պաշտպան Միւսիմաններու»: Արդարեւ երբ խնդրոյն ձօնեանց մակերևոյթապէս, կը տեսնենք որ Գերմանիան թիւրքիոյ բարեկամ է, սակայն երբ խնդրոյն խորը թափանցենք, պիտի տեսնենք, որ նա եղած է միշտ կեղծ բարեկամ, և առիթը ներկայացած ժամանակ ցուցադրած է իր կեղծաւորութիւնը, դաւաճանութիւնը,—օրինակ Կրէտէի խնդիրը: Իսկ այժմ ալ Բօցոսամի մէջ կը Համաձայնի՝ չխանգարել Ռուսիոյ Մերձաւոր Արևելքի ծրագիրները, պայժմանաւ որ Ռուսիան ինքն ալ չխանգարէ իր Պաղատաի երկաթուղւոյ ծրագիրը, որ ուրիշ բան չէ, եթէ ոչ խաղաղ նուաճում թուրքական նահանգներու:

Ինչպէս ըսինք, Գերմանիան պէտք ունի նոր շուկաներու իր արդիւնաբերութեան Համար: Նա փորձեց խլել Հոլանդական գաղութները, բայց անցաջողութեան ժայռին Հանդիպեցաւ, յետոյ փորձեց Ափրիկէն, Չինաստանը, դարձեալ անցաջողութիւն: 1882էն յետոյ ձեռք բարկաւ թիւրքիոյ՝ որպէս քայքայելիք մի պետութեան: Փահլէկէց Համիտը գրկաբաց ընդունեց Վիլհելմը, որպէսզի թիւրքիոյ մէջ Հակառակ շահեր ունեցող ճրջակից պետութեանց թիւր մէկով աւելնայ, իսկ ինքը, Համիտը օգուտի այդ պետութեանց ճրջակցութենէն և այդ կերպով պահպանէ թիւրքիան վերջնական քայքայումէ: Իրականութիւնը այժմ կուզայ ապացուցանելու, որ Ապտիւլ Համիտի քաղաքականութիւնը փտած էր: Գերմանիան տարաւ յաղթանակը և թիւրքիան տուժեց, ու պիտի տուժէ այսուհետև ալ, քանի ներկայ թուրք քաղաքագէտները կը մնան Ապտիւլ Համիտի քաղաքականութեան շարունակողներու զիրքին մէջ:

Հիմնովին սխալ էր նաև Համիտի ա՛յն կարծիքը թէ՛ պիտի կրնար Գերմանիան մղել ընդդէմ Ռուսիոյ, վասնզի եւրոպական պետութիւնները, ըլլալով Հանդերձ ակոյցեաններ, միշտ ալ Համաձայնած են իրարու Հետ, երբ խնդիրը վերաբերած է թիւրքացէն պատասաներ փրցնելու: Թիւրքիոյ մէջ բարենորոգումներ մտցւելուն ոխերիմ թշնամի Յարիզը Բէվալի մէջ Համաձայնեցաւ Անգլիոյ ծրագրին, որ բարենորոգումներ մտցւէր թուրքիոյ եւրոպական մասերուն մէջ: Արդէն Ռուսիան ունեցած է երկու քաղաքականութիւն թիւրքիոյ Հանդէպ: Մէկը՝ քայքայել, կործանել, բաժանել զայն: Իսկ եթէ այդ Հնարաւոր չէ, պահպանել զայն ընդդէմ միւս ոչմերու՝ յարմար առթիւ մը բոլորովին կլանելու Համար: Ռուսիան, ուրեմն, Համաձայնելով Գերմանիոյ Հետ, իր թիւրքական քաղաքականութենէն ոչինչ չի փոխեր: Ռուսական աճող արտադրութեան Համար ալ Հարկաւոր են նոր շուկաներ: Եւ երբ Մալապոյն Արևելքի մէջ շուկաներ ստեղծելու իր ծրագիրը վիժեցաւ՝ ձաբօնիոյ ընդդիմադրութեան բաղխելով, աչքերը դարձուց դարձեալ Մերձաւոր Արևելքը, ուր թիւրքիան ջանքեր կրնէ վերածնելու, իսկ Ռուսիոյ բնաւ ցանկալի չէ վերածնուած, բարեկար-

գաւծ, ուրեմն և Հզօրացած, Թիւրքիա մը: 1833ին երբ թիւրքիան կը մտնէր բարենորոգումներու շաւղին մէջ, Ռուսիան չէր որ ոտնձգութիւններ ընելով վիժեցուց այդ ծրագիրը:

Մենք Գերմանիոյ և Ռուսիոյ այս նոր ոտնձգութիւնները կը Համարենք դաւադրութիւն, բռնաբարում ազգերու ինքնուրոյնութեան դէմ, և մեր բոլոր ոյժով կը պայքարենք այդպիսի դաւադրական արարքի մը դէմ, արարք մը, որ պիտի ստիպէ թիւրքիան կրկնապատկելու իր սպառազինութիւնը, և որու Հետեանքը պիտի ըլլայ քայքայումը, սնանկութիւնը այս երկրի:

Յաւալի է, որ ժէօն թիւրքերը՝ Բօցոսամի մէջ իրենց Հայրենիքին դէմ լարած այս թակարդէն փոխանակ զուշանալու, ընդհակառակը, կուրօքէն կը նետուին Գերմանիոյ զիրկը՝ Հրատուրելով անոր միլիտարական ոյժէն:

Գերմանիան վստահելի ոյժ չէ, նա դաւաճանած է թիւրքիան—Կրէտէն, Պօնտ-Հէրցեզովին և Բօցոսամ—և պիտի դաւաճանէ այսուհետև ալ:

Իրերու այս դրութեան մէջ, ժէօն թիւրքերը Հետևելիք ուրիշ բանաւոր քաղաքականութիւն մը չունին, եթէ ոչ՝ յենւել բացառապէս թիւրքիոյ բաղկացուցիչ ազգութիւններու վրայ: Թիւրքիոյ ապահովութիւնը անոր այլազան տարրերու Համերաշխութեան մէջ պէտք է փնտռեն: Իսկ այդ Համերաշխութիւնը չի կրնար գոյանալ, մինչև որ պետութիւնը, որ Հասարակական օրկանիդմ է, չ'ըլլայ բոլորինը, ինչպէս որ էր Հին լէժիմի օրով: Այս ուղղութեամբ գործելով Հանդերձ, անմիջապէս պէտք է ձեռք առնել թիւրքիոյ անտեսական վերածնութեան գործը՝ յենւած սեփական ոյժերու վրայ:

Եւրոպական պետութիւններէն և կամ անոնց Հակամարտ ոյժերէն չէ՛, որ թիւրքիան պիտի ստանայ իր փրկութիւնը, այլ նա իր փրկութիւնը ՊԻՏԻ ՓՆՏՈՒՆ ԻՐԵՆ ՄԷՋ: Փրկութիւնը պիտի գտնուի և ոչ թէ՛ դուրսէն:

Բ. ՎԱՐԱՋԻՐԱՏ

Թ Ղ Թ Ա Կ Ց Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Ն Ա Մ Ա Կ Կ . Պ Օ Լ Ս Է Ն

Ոչինչ այնքան խոտելի չէ, որքան քօղարկուած կեղծաւորութիւնը. իսկ իր մերկութեան մէջ՝ դա աւելի քան նուկալի է: Եթէ բարօջախօսի բռնեղով ձօնեանայինք խնդրին, ճիշտ այդ եղբերով է որ պիտի սրակէինք արտաքին, մանաւանդ վեց մեծ կուշուած, պետութիւններէ յարաբերութիւնը՝ «սահմանադրական» թիւրքիացի նկատմամբ:

Արևելեան Խնդրի սկզբնաւորումից ի վեր՝ այս մի քանի դարերի մէջ, քանի՛ քանի՛ անգամ զիւանագէտներ, քաղաքագէտներ, պետական անձնաւորութիւններ՝ իրենց խաղը յաջող խաղալ կարողանալու Համար, չեն խօսել, չեն ճառել մարդասիրական, անշահախնդրական դիմակը իրենց երեսին

առած՝ Թիւրքիայի բարեկարգութեան ճասին: Միթէ պետութիւններ չեն երկայացուցչական ճարձիւնները՝ կօնփերանները, կօնփերանները քիչ արձագանց են տուել Օսմանեան Կայսրութեան բարեշինութեան խնդրին:—Ո՛չ ոք, անշուշտ, նոյն իսկ Հեղինակները և իրենց ունկնդիրները ճի բոլոր չեն տատանուել ասելու՝ թէ զրանք բաւեր են եղած ո՛չ իսկական ճիւղը արտայայտող, այլ՝ աւելի ճածկող, սքողող: Պատճառով զրա արձանագրութիւնն ունի իր լայն էջերի ձեւերկար պրպտումներ, ցուցումներ, հարկ չկայ, խնդրն աջնքան որ պարզ է և վիճաբանութիւն, առարկութիւն չլիբրնող:

Թիւրքիան "ասճանադրական" յայտարարելուց յետոյ՝ ձեռք չենք, որ ճի բոլոր քննադատական ակնոցը վայր դրած լինէինք ձեր աչքերից: Ծարունակ դիտել, ասել, խօսել և անխնայ հարուածել ենք ու աշխատել ինչ որ լինում է-ի տեղը տեսնել ինչ որ պիտի լինին: Եղածից լաւագոյնը, աւելի պատշաճը, իրերի բնութեան աւելի համապատասխանը,—ձեռք սրանք ենք փնտռել և խոչնդատը նշմարածին պէս՝ նշարակը պարզած՝ առարկան ինչ ցնցումներ էլ որ ունենալու, ձեր նկատմամբ ինչ զգացումներ էլ որ տածելու լինէր: Մենք ձեր այս ուղղութեան ձեւ կյարատեւներ, մինչև որ ամէն յորինուածութիւն, ամէն օրգանիզմ իր իսկական պրօպետի մէջը ճանի անարգել և յառաջ դայ այն, ինչ որ գալու իրաւունք ունի: Բնադատել՝ ուղղելու, շտկելու, լաւագոյնը ձեռք բերելու ճիւղում և ոգով,—դա ամէն ընդլիճադրի իրաւունքը և ճիւղագծայն պարտականութիւնն է:

Ձեռք ասում որ "ասճանադրական" Թիւրքիայի վարելչները սխալներ, աղաղակիչ սխալներ չունեցան: Մենք չենք թերացողը նրանց պահատութիւնները երեւան դնելու գործին մէջ: Բայց ճարգ իր նողկանքը չի կարողանում զսպել, երբ ակնյայտնի կերպով, առանց դիւանադիտական շարքի իսկ, օրը օրին տեսնում, շօշափում է թէ ի՛նչպէս արտաքին պետութիւններից ճի քանիսը, ճասնադրապէս օգտուելով եղած թերութիւններից և փորձառութիւններից, աւելի քան չկաճութեամբ, բացայայտ նախանձառութեամբ և ասելութեամբ են վերաբերում գէպի Թիւրքիայի վերածնութեան գործը, մինչդեռ Հինգ զրանք են եղել որ շարունակ կրկնել, վերակրկնել են Թիւրքիայի ընդհանուր բարեկարգութեան անհրաժեշտութիւնը ու պէտք է ասել, այդպիսով են ձօնեցել յօշոտման գործողութեանը:

Ու ցան էլ Հինգ այն է, որ իրերի այս գրութեան մէջ, այս երկրի վարելչ ճարձիւնները, փոխանակ իրերը իրենց իսկութեան մէջ տեսնելու և ըստ այնմ իրենց գնահատումներն անելու ու գործունէութեան ուղեգիծ որոշելու,—նրանք շարունակում են արտաքին այս և այն պետութեան, դուցէ տկամայ, գործիքը հանդիսանալու, նրա թրմբուկի ձայնովը խաղալու, փոխանակ ջանարու երկիրը իսկական և արձատական բարեկարգութեան ճղերու:

Թիւրքիան՝ որպէս պետական գոյացութիւն, այսուհետև բացառապէս պիտի յենուի իր սեպհական ժողովրդների, իր բաղկացուցիչ աղբութիւնների վրան, իր փրկութեան, իսկական ազատագրութեան, յառաջադիմութեան, անբախնուման ճիւղի և մնայուն ազդակները սրանք են:

Մեծ կռուած պետութիւնների դիւանագիտական հակաճարտութիւններից օգտուելու քաղաքականութիւնը իսպառ ճի կողմ պիտի թողնել,—դա Թիւրքիային Թիւրքիա դարձնող ճիւղն է: այսինքն ճի երկիր, որ կիսօտուի բարեկարգութիւնների անուամբ, որոշումներ կկայանայ, բանաձևեր, օրէնքներ կկազմուի, սակայն գործողութեան մէջ կա՛մ բուրովին չի ճանիլ, կա՛մ աւելի վատ հետեւանք կունենայ, քան լաւ: որովհետև հակաճարտ ոյժերը ձեռքի տակից քանդում են այն, ինչոր երեսանց ասում, ստորագրում, թելադ-

րում են: Պատճառով զի քան որ ունի տուած այդ ճասին: Ո՛ւր է 1908-ի անասճան խանդավառութիւնը, որ ճի բոլորում Թիւրքիայի մէջ ամփոփուած բոլոր աղբութիւններն իրարու ճօս բերեց ա՛յնքան անկեղծօրէն: Համերաշխական թոխքը ընդհանուր էր, անվերապահ և անխարդախ: Բայց ինչո՞ւ յանկարծ այդ կրակը ճարեց և ամէն մէկը ճի կողմ քաշուեց՝ պաղ ջուր վրան թափուածի պէս, ինչո՞ւ կարճ սղեորութիւնից յետոյ ընդհանուր լքում, յուսախաբութիւն տրեց,—նրա համար, որ Թիւրքիայի ժամանակակից վարելչ ճարձիւնները իրերը ուղեցին բուն աղան: Արդէն նացիօնալիզմը ուրիշ արտադրութիւն չէր կարող ունենալ, քան ինչ ունեցաւ: Եղածը իրական արդիւնքն է իր աղբակների, իր յառաջացնող պատճառների:

Մենք աւելի քան համոզուած ենք, որ օտարը զրուան շարունակ եղան, ջուրը պղտորող ձեռքը զրուից պակաս չէ, դեռ ճի կողմ թողնեք ներսի յետադիմականները և իշխանութիւն ձեռք բերելու համար երկրի մէջ ամէն տակնուվրայութիւնների համար պատրաստի եղողները,—բայց թուրք տիրող նացիօնալիզմը Հինգ ինքը այդ ջուրը պղտորողներին դիւրութիւններ չի տալիս, որ փոխանակ գէճօկը արատական, ազգերի ինքնօրոշման սկզբունքը իր գործունէութեան յենակէտը ընդունելու, ամէն ինչ զրուի, քայլեցնել է ուղում իր խարխալած նացիօնալիստական սայլովը: Այդպէս վարուելով՝ ինքը չի՞ նպատում "օտարներ" և "ներքին անբարեացակամներ"՝ միտումներին, ի վնաս այն երկրի իսկական շահերին, որի անուամբ գործում, խօսում է:—Սա նացիօնալիզմի ինքնադատապարտութեան վճիռը չէ:

Եւ նացիօնալիզմը և՛ իսկական բարեկարգութիւն, յառաջադիմութիւն, և՛ նացիօնալիզմ և՛ անպարտութիւն, խաղաղութիւն, համերաշխութիւն, միութիւն՝ սրանք երկու անկարելիութիւններ են, մեծութիւններ՝ իրարու չճածկող:

Ճանք նացիօնալիզմի անարանգութեան ճի նմոյշ—պտակիրը:

— "Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Եղեսիոյ Մասնաճիւղի Վարչութեան.

Արփայի արևմտեան, Հիւսիսային և Հիւսիսարևմտեան կողմը՝ քաղաքէս քաղաք ժամ հեռաւորութենէն մինչև Հինգ ժամ՝ գրեթէ ամբողջովին այգեստաններով ճածկըւած է, թուրք, ասորի և մեծ ճասածք հայ ժողովրդեան սեպհականութիւնն ըլլալով: Եւ ճանաւանդ ասոնց մեծաճասնութիւնը բէն ճպէր դասակարգէն ըլլալով՝ անկէ կուտուէ իր ընտանիքին տարեկան ապրուստին ճի կարեւոր ճասը:

"Այդ այգիներուն ամէն տարի օրինական միւլք էն և տասանորդը կուտանք օսմանեան սահճանադրական կառավարութեան, որպէսզի այն այգիներուն թէ պտուղներն և թէ թուփերն ու ճառերը պահպանուին. մինչդեռ պտուղները պահպանելու՝ այգեաէրերը կա՛մ պահպան կրկն և կամ անձամբ կերթան պահպանելու և այգեկութէն վերջ, երբ քաղաք վերադառնան, դարձեալ ճասնադր պահպաններ կը դրուին, թափուր մնացած թիփերն ու ճառերը պահպանելու ընդհակառակը՝ այգիներու ճօտակեաց գիւղացիները և քաղաքիս աղբիցի աղաները իրենց հօտերուն և երանակներուն արածել տալով՝ բուրովին կտանակիտուին, յաջորդ տարուան մեծամեծ վնասներ թողով: մինչև իսկ թիփեր և ճառեր կը ջարդուին և արձատախիլ կառնուին ու շատ անգամ պահպանները կճեծուին՝ երբ արգելուն: Այս աւելիք վիճակը թէև բունակարգութեան օրերուն յատուկ էր, սակայն մինչև իսկ այս սահճանադրութեան օրերուն մէջ նոյնը կշարունակուի: Այս ճասին տեղական կառավարութեան գիմումներ ընելով խնդրած ենք. սակայն գործնական քայլ ճը չէ առնուած:

"Փնտնալով որ Կուսակցութիւնը հասարակական և ի-

բաւազուրիկ դասակարգին, առանց ցեղի և կրօնի խտրութեան, իրաւանց և շահերուն պաշտպան ըլլալու արտօնուած է օսմանեան սահմանադրական կառավարութեան, ուստի այս ճառին Ձեզի կրկնենք, որ Ձեր կարելի ճիշդները գործադրել հաճելով՝ ձեր շահերը և իրաւունքները պաշտպանելու ջանաք»:

”Ի դիմաց եղեալայի Հասարակութեան...”

“Աղերսագիր”ը սև և կարծիր թանաքով կնքել ու ստորագրել են աւելի քան 250 հոգի, որոնց մէջ բաւականին ճեճ թուով թ ու ը ք ե ր կան:

Հիմայ Հասկանալի է նայիծնալիզմի չարիքը: Ինչո՞ւ համար ”աղղեցիկ ազաներ”ի շահատակութիւններէ, երկիրը կործանող ոյժերի արարքներէ առաջը չի առնուած, կէս ճիւղիօն պատրաստի՝ սուրինի տակ զինուոր ունեցող մի պետութեան ղեկավարներէ համար սա դժուար էր:

“Աւերիչ վիճակը, որ բռնակալութեան օրերուն յատուկ էր”, ինչո՞ւ “այս սահմանադրութեան օրերուն նոյնը կշարունակուի”, — որովհետև կայ նայիծնալիզմ, որովհետև թուրք նայիծնալիզմի խելքով՝ միշտ տարր պիտի ունենալ ուրիշ տարրի դէմ հանելու և այդպիսով պետութեան գոյութիւնը սպաւորվելու.— է՛, միթէ բռնակալութիւնը այդ միջոցը չունէր իրեն տակտիկայ: Սա եզրու: Ա՛յս քաղաքականութիւնը պիտի ունենար իրական վերածնութեան ձգտող մի վարչութիւն: “Օտար”, “թշնամի” պետութիւններէ քայքայիչ դիրքը ա՛յսքան որոշ, կարկառուն կերպով հանդէս գալուց յետոյ՝ սա՛ պիտի լինէր երկրի ցաւերին դարձան տանել ուզող իր կառավարութեան գործը:

Աչքներս դարձնենք ուրիշ կողմեր: Կարդանք Սօցիալ—Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութեան Օրտուի Մասնաճիւղի թուուցիկը:

—”Ս. Դ. Հնչակեան Կուսակցութիւնը հրապարակ եկած ըլլալով՝ իրաւագործի և հարստահարուած ժողովրդի իրաւունքները պաշտպանելու համար՝ Մասնաճիւղս չի կրնար հանդուրժել վերջերս կատարուած՝ կառավարական և դատական կարգ ձր պաշտօնեաներու կողմէ՝ այնպիսի անարդար արարքներու հանդէպ, որոնք գերազանցապէս արդարութիւնը խելզդելու և սահմանադրական կարգերը խախտելու բնոյթն ունին...”

”Բռնապետական օրերուն մէջ՝ կարգ ձր աղղեցիկ և շահամոլ անհատներ իրենց կամքը իբրև դէնք կը գործադրէին. պիտի թոյլ տա՞նք որ ա՛յնքան զոհողութիւններով, նոյն իսկ արեան գնով, ձեռք բերուած Սահմանադրութիւնը և օրինաց արձանադրութիւնները այսպէս այլանդակօրէն խելզաթիւրուին:

”Յանուն արդարութեան և հարստահարուած ժողովրդի իրաւունքներու՝ կոչուած կրնենք ժողովրդեան և անկէջ ճնունդ առնող կազմակերպութիւններուն՝ իրենց բողոքի ձայնը միայնել մերինին հետ, միանգամ ընդ միշտ վախճան ձր տալու համար անիրաւութեանց:”

Ինչո՞ւմն է խնդրի էութիւնը: Ահա այն.

”Օրտուի յայտնի աւազակներէն՝ Պաճըն-Չատէ ԱՀմէտ էֆ., որ աճէն կերպով կը շահագործէր և կը կեղեքէր անխըտիր բոլոր զիւղաջրութիւնը, անցեալ տարի, Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Օրտուի Մասնաճիւղի ազրու բողոքներուն վրայ՝ թողած էր ահաբեկելու, սարսափեցնելու իր սօվորական միջոցները և զիմած էր դատարան՝ պիւղաջրներու վրայ իր ունեցած ապօրինի պահանջները գանձելու համար: Դատավարութիւնը ձօտաւորապէս մէկ տարի շարունակուելէ վերջ՝ ամսոյս 13-ին (մարտ), ի նպատակ ԱՀմէտ էֆ.-ի վճռուեցաւ, շնորհիւ իրեն՝ դատարանական պաշտօնեաներու վրայ ունեցած հեղինակութեան”:—

Պաճըն-Չատէ էֆէհիտուն ինչո՞ւ չի զսպում կառավար-

ութիւնը, որովհետև նա բէկ է, աղայ է և, վերջապէս “աղղայնամոլ” է. իսկ դրանք կառավարութեան այսօրուայ հոտոտելիք բազմերանդ ծաղիկներն են: Փէօպալը դեռ պէտք է՝ մտածուած է երկրի վարիչ ոյժը, ճանաւանդ որ նրա զուլումների աւարկան ոչ-թուրքեր են և զուլումը բայները՝ թուրքեր:

Ինչո՞ւ համար ղեղձ, կաշառակեր, հեղինակութեան ենթարկող դատարանական պաշտօնեաներ են պահուած և ո՛չ թէ մարտը, իր պարտականութիւնը ճանաչողը: Ինչո՞ւ համար արդարագրատութիւնը ոտնակոխուած, ծախու է հանուած,—որովհետև նրանք նայիծնալիստներ են, և կառավարութեան հաշիւներին ձեռնառու չէ նրանց վտարել ու տեղը առնել Հայեր, Յօյներ...—սրանցից այն պարկեշտները, որ թուրք սարբի մէջ շիւնն:—Պատճառը պարզ է, նախ թուրք պաշտօնեայ. սրան անպատ սու պէտք է պահել և չփոխարինել մի ուրիշով, եթէ նա նոյն իսկ ուղղամիտ և պարտաճանաչ մէկը լինէր, որովհետև զո նայիծնալիզմի հրամայականներից հեռու կտանէր:

Տրգրանակերտը ընտրել էր աղին, պարտաճանաչ, ժողովրդի ցաւերին ցաւակից մի քաղաքագլուխ՝ Չրաճեան էֆ.: Իր պաշտօնի գիտակցութիւնը ունեցող մէկը ի՛նչ կարող է անել,—Չրաճեան էֆէհիտին չէ թերացել: Ժողովրդական ամէն տարր նրան համակրում էր: Բայց Չրաճեան էֆէհիտին մի խոշոր սխալ ունէր,—այդ այն էր՝ որ նա Հայ էր, այդ բաւական էր, որպէսզի նրա բոլոր բարեմասնութիւնները առ ոչինչ համարուէին: Եւ այդպէս էլ լինում է: Ճեղքելի-Չատէ Աղի՞ “հակասահմանադրական”, “խտաղիճական”, “կողողատող”, “ժողովրդի արին ձձող”, սա մի խուճը “աղղեցիկներ” իր գլխին հաւաքած, ո՛չ միայն ամէն արգելքներ յարուցանում է Չրաճեան էֆէհիտու պաշտօնավարութեան դէմ, այլ յաջողում է զօրով, բռնի, գրեթէ ինքնազուլու նրա տեղն անցնել և ինքն իրեն Տրգրանակերտի քաղաքագլուխ հռչակել: Իրարանցում, ժողովրդական բողոք, բայց զո նշանակութիւն չունի, կառավարութիւնը կատարում իրաւութիւնը ընդունում է, բաւական է որ նայիծնալիստական երակ կայ իրաւութեան մէջ:—Այսպէս պիտի լինէր վերածընունդի օրերի մէջ ճանող Թիւրքիայի ճակատագիրը վարողների ընթացքը:

Անցնենք ուրիշ վայրեր:

—“Արսլանբէկէ կէս ժամ հեռաւորութեամբ դէպի Հիւսիսային արևմտեան կողմը կայ արքունի ասուի գործարան մը, որուն մէջ կաշիսաւին ձօտ 450-500 բանուորներ, գրեթէ ճեճամասնութեամբ Հայ, Պարսիզակէ, Օվաճըզէ և Արսլանբէկէ: Սոյն գործարանը Հին բէթիմի ժամանակ անկանոն վիճակի մէջ կաշիսատէր և տարւոյն գրեթէ ճեճագոյն մասը փակ կը մնար, և որովհետև բանուոր դատակարգը միմիայն անով կրնար ապրել, ուստի գործարանին փակ մնացած առ տեղները անվարձ այլ աշխատութեանց, կատարուէր անգործ մնալ, սպասելով որ գործարանը շարունակէր իր աշխատութիւնը որպէսզի իրենք ալ կարենային հայթայթել իրենց օրապահիկը, ահա այս և իրենց բնականէն արդատ ըլլալուն պատճառներով, արօջետար գասակարգը մասնուած էր յետին չքաւորութեան և ճանր պարսքերու տակ ընկնուած:

”Այն օրէն սկսեալ երբ սահմանադրութիւնը եկաւ վերջ գնելու այսպիսի անտանելի կացութեան, ահա գործարանը ևս ազատուեցաւ կաշկանդող ձեռքերէն և հեռագհեաէ կանոնաւորութեան մէջ մտնելով, այսօր գրեթէ անընդհատ կը շարունակէ իր աշխատութիւնները, ասիկա բնականաբար ճեճապէս կը նպատակ բանուոր դատակարգի նիւթականին, սակայն ահա ուրիշ խնդիր մը դարձեալ շփոթութեան կը մտնէ աշխատանոցը, այն է թէ մէկ թիւի տուրքի խնդիրն:

”Անցեալ 1909 տարւոյն մէջ իւրաքանչիւր բանուորէ

11-ական դուրուշ թ է մ է թ թ ի ւ աւին : 1910 տարին 21-ական, սակայն այս տարի իւրաքանչիւր բանուորի աշխատութեան համեմատ 20-էն մինչև 100 դուրուշ պիտի առնեն եղբր, ասիկա շատ ծանր պիտի գայ բանուոր դասակարգին համար, քանի որ անոնք զոհասցուցիչ օրականով կամ ամսականով չէ որ կաշխատին. շատերը ամենաչնչին օրականներով կաշխատին և շատեր ալ կեօթուրի օրնիբուն չարաչար աշխատելով հազիւ կը բաւէ իրեն ու իր ընտանեաց օրապահիկին, կը պատահի որ գործարանէն դործիք մը կաւրի և հարկ կըլլայ 10-15 օր գործարանը փակել, սհա՛ նոյն օրէն կը դադրին բանուորներու աշխատավորներն, դարձեալ կը պատահի որ գործաւորը կը հեռանայ և կըլտիպուի 15-30 օր չաշխատելու, այս տեսակ պարագաներու տակ ևս գործաւորն է, որ կը տուժէ, քանի որ նոյն օրէն սկսեալ դարձեալ կը դադրին իրենց օրականներն: Այս տեսակ պարագաներ յաճախուղէպ են”:

Եթէ դժխայլն աշխատանք կատարող բանուորը պիտի պարտաւորուի 20-100 դուրուշ վճարել՝ իր ստացած չնչին օրավարձից. ապա ինչո՞ւ համար հարիւր հազարաւոր սակիներ ունեցողները ոչինչ կամ շատ աննշան տուրք են տալիս. նրա համար որ իրենք աղաներ, բէկեր, “ազգեցիկներ” են, իսկ միւսները ծարղ-գործիքներ: Երկիրը շէնցնող, սոմուր, իտական քաղաքակրթական շաւղի մէջ պիտղջ գործաւոր, բանուոր դասակարգն է: Սա է ստեղծող ոյժը. օրէնքը սրան էր որ օգնութեան պիտի հասնէր և նրա տառապանքին ու շահագործութեանը միջամտուէր:—Բայց նացիօնալիզմը բաւականացաւ գործաւոր դասակարգին յանձնարարել աղաների, բէկերի, գործարանատէրերի, բոլոր ծանր ու խոշոր շահագործողների “գութին”:

Վերջ:—Արտաքին անբարեացակամները դիրքը դէպի վերածնուող Թիւրքիան աւելի քան դատապարտելի է: Երկրի վարիչ մարմինները իրերի պահանջուած բարձրութեան վրան չեն,—սա էլ դատապարտելի է:

20 Մարտ, 1911 Կ. Պոլիս ԷՆԴԻԺԷՆ

Ն Ա Մ Ա Կ Թ Ի Ֆ Լ Ի Զ Է Ն

Այն ժամանակ, երբ մէկ դարից աւելի աննկարագրելի եռանդով ու թափով գործող և այդ գործը 1905-ից յետոյ աւելի քան սաստիկութեամբ առաջ տանող բռնապետական հին, պառաւ Ռուսաստանը, հսկայական լայնածաւալ երկիրը մէկ ծայրից միւսը վերածել է մի անաւհամար բանտ-տանջարանի, և այնտեղ տանջուած ու խեղդամահ անուած նոր-Ռուսաստանի լուսադրն գաւակներին և կամ աշխատուած այլպիսիների լեզուները կտրել, բազուկները կտորատել, թէկուզ նրանք հարիւր հազարաւորներ լինէին. այն ժամանակ, երբ Արարատից՝ Արխանգելի, Վարշաւայից՝ Մանչիւրիա տարածւող ընդարձակութեան վրայ բնակուած աւելի քան հարիւր եռեռու միլիօն ժողովուրդը, ամեն օր արշալոյսին, ի փառս Ալահի և նրա երկրային փոխանորդ ցարի և նրա բոլոր հաւատարիմների, տանեակ կախաղանների չւանների ճրուճըրոցի երգով և մի քանի տանեակ գնդակահարումների սուլումով, նիկոլա-Ստոլիպինեան շարահաններով ցայգերգն են սուռում. երբ ձուժ տարրերի, հարտահարողների, հոգով, մտքով, զգացումներով և բոլոր էութեամբ պոռնկացած սրկանների վոհմակ-կառավարութիւնը, մտունդ տարով աղատ սէրեան լիզան երի և կարծիր սենեակն երի մարդասպան գոյութեանը, կամենում էր այն տեղերում սպաննել

մեռցնել նոր Ռուսաստանի, Երիտասարդ Ռուսաստանի նոր, յուսատու, պայքարի և գոռ մարտնչուծի պատրաստող սեբունդի ոգին, կեանքն ու եռանդը. երբ նիւթուած ազգամիջեան կռիւներին յաջորդող եղբայրասպան կոտորածները, մահասիւնու էկզեկուցիաները, կատարուած անհաշիւ ձերբակալութիւնները և սրանց նման բոլոր ծանօթ անծանօթ դաւերի գործադրումովը, իրեն բաւական հանգիստ և ապահով դրութեան մէջ էր երեւակայում բռնապետական Ռուսաստանը, մէկէն, շատերի համար բոլորովին անսպասելիօրէն, դարձեալ սոքի ելաւ Երիտասարդ Ռուսաստանը:

Ուրքի ելաւ Ռուսաստանի ուսանողութիւնը, սկսեց երգը Հնի մահւան օրօրի, և՛ “Պառաւ Ռուսաստան, պատանդ ենք հիւսուծ...” իր գոռ շէշտերը լսելի դարձրեց բոլոր կամաւոր խուկերին:

Քէակցիօն տարրերը ա՛յնքան յանդուգն դարձան, իրենց սիրագործութիւնների մէջ ա՛յնքան առաջ գնացին որ՝ եփած հաւեքն անգամ, այսինքն մեր ողորմելի հոկատեմբերեանն երբ, լեզու ելան, երեւակայեցէք որ հոկտեմբերեաններն անգամ հալածուած են իրենց ձախակողմեան (՞) զազափարների համար”:

Ուսանողական ապրտամբութիւնը—դասադուլը իր վրայ է կեղրոնացրել ողջ երկրի ուշադրութիւնը. Ռուսաստանը սպրում է այժմ ուսանողութիւնով. բանտերը, աքսորավայրերը դարձել են համալսարաններ: Դրութիւնը ինչքան որ ծանր ու պատասխանատու, այնքան և ա՛ւելի յուսատու և ոգևորիչ է:

Անմասն չեն և մեր յեղափոխական տարրերը, մանաւանդ Սոցիալ—Դեմոկրատեան, և ո՛չ միայն անմասն չեն, այլև ամենալուրջ և արժատական կերպով գործակցում, թրուուցիկներ, սգևորիչ գրուածքներ, գրքոյկներ և արտասահմանեան թերթեր բիւրաւոր օրինակներով գալիս են վառուած կրակը բորբոքելու:

Անգործ չեն և՛ մեր կազմակերպութիւնները, հսկառակ այն իրողութեան, որ մեր ծանօթ, փորձառու և սիրուած առաջնորդները, մտքի և գրչի զինուորները, տանեակներով հեծում են բանտերի և աքսորավայրերի արգելարաններում, և որ նրանցից շատերի, թէկուզ ի նպատակ գործի, դատապարտուած են ժամանակաւոր անգործութեան, բայց և այնպէս մերոնք, այժմ քան երբէք գերազանցօրէն խանրավառուած են:

Այս բոլորի մէջ, երբ անխառն խանրավառութիւնը և վերապրելու, նորը ստեղծագործելու համար գերմարդկային ճիգեր են թափուած և զոհաբերումների անվերջ շարաններն անհասնում շարունակում են մարտիրոսագրութեան կարմիր ճամբայէն քալել, տխուր է և անփայլ, մինչև անգամ անյոյս, հայ ճամուլի և նրա սպիտակ էջերը մրտողների կատարած դերը, ժողովրդին, հասարակութեան մատակարարած մտաւոր մտունդ կերակուրը: Հայ ճամուլը մեղանում, և նրա բոլոր յայտնի անյայտ մշակները, ժողովուրդը զբաղեցնում են, գիտէք ի՞նչ բանով... կաթողիկոսական հարցով, կրկնում են սա աւելի քան վհատեցնող է, բայց մենք հաւատացած ենք ու համոզուած, որ սա անփառունակ հայկական տիրաց ու ի զմի տէր ողորմեանները պիտի անլսելի դառնան մեր մարտագոռ և փրկարար երգերի դաշն համերգի մէջ, երբ մենք մտնելով “պրօլէտարներ, բոլոր երկրների, միացէ՛ք” վեհ նշանաբանը կրող կարմիր դրօշակների տակ, լիաթոք կերգենք... “Հիւսուծ ենք, հիւսուծ, Պառաւ Ռուսաստան, պատանդ ենք հիւսուծ...”:

Այո՛, Պառաւ Ռուսաստանը մահամերձ է, մի ուժգին հարուած է, և նրա անշունչ դիակը արդէն փաթաթուած կը լինի պրօլէտարների ձեռքով հիւսուած պատանի մէջ:

Թիֆլիզ, 10 Մարտ, 1911 ՀՆԱԿԵԱՆ

ՆԱՄԱԿ ԹԵՎՐԻՋԻՅ (1)

“Դաշնակցականները” դարձեալ սկսել են իրենց պատճառական գործունէութիւնը:

Ապրիլի 3-ին, Արամեան դպրոցի բակում, զիշերը, ներկայացուցից յետոյ, “Ձանգ”ի խմբագրութեան անդամ՝ ընկեր Ալէքսան Տէր Վարդանեան, 7-8 հոգուց բաղկացած մի խումբ “դաշնակցական” զինւորների կողմից, ճախարհի ենթարկուց: Ընկերը ծանր վէրք ստացաւ գլխից: Մահափորձի միակ պատճառն է եղել, ինչպէս որ իրենք յայտարարել են ամէն տեղ, “Դաշնակցութեան” բռնութիւնների դէմ “Ձանգ”ում լոյս տեսած յօդածները:

“Ձանգ”ում լոյս տեսած՝ դաւաններում “Դաշնակցութեան” կատարած բռնութիւններն ու ոճրագործութիւնները մերկայնող յօդածներին՝ անկարող լինելով պատասխանելու (“Դաշնակցութիւն”ը Թավրիզում հրատարակուած է “Առաւօտ” անունով մի թերթ), նրանք զիմեցին “Դաշնակցութեան” յատուկ մեթօդին՝ այն է ճախարհի ենթարկելով ընկեր Ալէքսանին, այդ կերպ լռեցնել ճշմարտութեան ձայնը:

“Դաշնակցութիւն”ը, ուրեմն, իր ծառայողական հակառակորդներին դէմ սրով, գնդակով է կուռուած, “սօցիալիստ” դաւանաւուց և միջազգային Կօնգրէսների մէջ ծանկուն յետոյ է:

Պատահածը իր որոշ դոյներով արտայայտուցելու համար ատենք, որ ճախարհ կատարողները «Դաշնակցութեան» պաշտօնական զինւորներն են և “դաշնակցական” տեղական մարմնի բարձր պաշտպանութիւնը և հովանաւորութիւնը վախերդներ:

«Դաշնակցութիւնը» տարիներ առաջ Պետրոսի, իր այն ժամանակուայ ներկայացուցչի ձեռքով, Գօլիցիւնի տեւօրիստ Մհերին սպանել տարուց յետոյ, այժմ ճախարհ է կատարուած ընկեր Ալէքսանի վրայ: Դեռ այդ հերիք չէ: “Դաշնակցական” նոյն զինւորները, իրենց մարմինների բացորոշ թելադրութեամբ, սպանուած են “Ձանգ”ի խմբագրութեան միւս անդամներին, աշխատակիցներին և թղթակիցներին անգամ, տեւօրի ենթարկելու, եթէ նրանք դարձեալ “կհամարձակեն Դաշնակցութեան մտախն աննպաստ բան գրելու”:

Թավրիզ, 7 Ապրիլ, 1911 Հ Ն Չ Ա Կ Ե Ա Ն

Մ Շ Ե Ց Ի Ս Ե Ի Մ Ե Լ Բ Ո Ն

Ժողովրդական մի շատ սիրուած հերոս-գործչի կեանքի թէն էլ կտրուեցաւ, անցեալ աշնան Կարսի մէջ, սիրած, պաշտած, յաճախ իր արիւնով ուռցած երկրի սրտումը հանգչեցնելով իր յօգնատանջ գրուքը:

Դա՛ Մշեցի Սև Մեղքանն էր, ծարօնի հարազատ ծնունդ, պատճառական բաջերի յաջորդներից, արժանաւորագոյններից մէկը, որը ծնած ու սնած Մուշի անուշ դ ու ր ա ն ի Ալիարինջ գիւղում, տակաւին պատանի հասակում, ոգևորեց սըրբազան կրակով և նեւեց այն ու ա ղ ճ ա դ ա շ ա ռ ը, ուր շատերը եկել էին և իրենց կեանքերի գնովը պատրաստուած ուրիշների երջանկութիւնը:

Ժողովրդական հերոս էր նա, այս բառի բովանդակ և ազնիւ հասկացողութեամբ:

Ո՞ր զինւորը, ո՞ր բարոյիչը, ո՞ր գործիչը իր հետ, իբրև ընկեր, իբրև զինակից և իբրև առաջնորդող չի յիշուած Սև

Մանօթ.— “Հնչակ”ը ծածուկին էր յանձնուած, երբ Թավրիզից ստացանք սոյն թղթակցութիւնը: Խճբ.

Մեղքանին, 1893-ից՝ Սասուն-Մուշի Հնչակեան գործունէութեան փառաւոր օրերից մինչև 1910-ը:

Նա՛ հաւատարիմ և յանդուգն լրաբեր սուրհանդակ է եղել իր շա՛տ պատանի հասակում, 1894 թւականին, Սասունից Կովկաս: Ձինակիր-զինակից է եղել յայտնի Արաբօյլի:

Բայց Սև Մեղքոնը միայն Մասիսի էն կողմումը չմնաց: Հարազատների կողմին Մասիսի այս կողմից լուրը, նա արձագանգեց լիաթոր, և ահա, Հայ-Թաթար սարսափի օրերին, մենք տեսնուած ենք Արարատեան դաշտի զիւղացիներից սիրուած գործչին ձիւոր թիւուցիկ խմբի առաջնորդութեան մէջ, իր աւելի քան անւանի սպիտակ ձիւն վրայ:



Նրա մղած կռիւները, կատարած գործերը, լսման ու տքտորը, հարածանքը այս սեղմ տողերում չի կարելի սահմանափակել:

Թողնելով սպաղաչին ընկեր Մեղքոնի ծանրամասն կենսագրականը, մենք սրտի անհուն կսկիծով վերջացնում ենք այս տողերը, և քաղցրութեամբ ապրեցնում մեր մէջ ծարօնի հարազատի, Հնչակեան ազնիւ և անձնւէր զինւոր խմբապետի, համեստ բայց յարատև և յամառ Մեղքոնի յիշատակը:

ԲԱՅՍԱՌԻԿ ԹԻՒԻ „ՀՆՉԱԿ“Ի

Սօցիալ-Դեմօկրատ Հնչակեան Կուսակցութեան Կեղրոնական Վարչութիւնը ծօտ օրերս լոյս պիտի ընծայէ “Հնչակ”ի բացառիկ մի թիւ, նւիրուած ժողովրդական շարժման՝ ԳՈՒՄ—ԳԱՓՈՒԻ ԱՆԳՐԱՆԻԿ ՅՈՅՅԻՆ:

Բացառիկ թիւի բովանդակութիւնը պիտի լինի.—

1. «Հնչակ»ի հիմնադիրների խմբանկարը և անոնց համառօտ կենսագրութիւնը:
2. «Յույց»ը կազմակերպողների խմբանկարը:

3. Մայր եկեղեցին և Պատրիարքարան:
4. Թափօրք:
5. Աշրգեան Պատրիարքը:
6. Թափօր անցած փողոցները:
7. «Պատմական դեղարանը»:
8. Ընդհարման տեսարանը:
9. Նահատակների պատկերները և կենսագրութիւնը:
10. Մեծ պետութեանց դեսպանների և պետական պատասխանատու անձերի պատկերները:
11. Բռնապետութիւնը և նորա ներքին և արտաքին քաղաքականութիւնը:
12. Թիւրքիայի ընդհանուր վիճակը. Հայ ժողովուրդը և Հայկական Բառը:
13. Մեծ պետութեանց զիջքը Արևելեան Խնդրի Հանդէպ ընդհանրապէս և Հայկական Խնդրի մասնաւորապէս:
14. Գում—Գափուի ցոյցը յառաջ բերող պատճառները: «Յույց»ի նկարագրութիւնը:
15. «Յույց»ի պատմական նշանակութիւնը և Հետևանքը:
16. Մեծ պետութիւնների և Թիւրք բռնապետութեան գերը Գում—Գափուի ցոյցից յետոյ:

Ամէն ջանք պիտի թափել որ պատմական այլ գործը կատարեալ լինի ըստ ամենայնի:
 «Հնչակ»ի այս բացառիկ թիւը պիտի ունենայ ոչ նազ քան 152 էջ: Դինը կանխիկ 5 զրշ. է:

**ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ
ԱՐՏԱԲՍՈՒՄ**

Այսու պաշտօնապէս իր յայտարարենք ի գիտութիւն Սօց. Դէմ. Հնչակեան Կուսակցութեան բոլոր շրջանակներուն և Հասարակութեան, որ Հմայեակ Արամեանցը (Մ. Տ. Շուտ) իր կուսակցազաւ, Հակակուսակցական և խառնակիչ արարքներուն Համար արտաքսուած է Սօց. Դէմ. Հնչակեան Կուսակցութեան շարքերէն, ՈՐՊԷՍ ԿՈՒՍԱԿՅԱԿԱՆ ԴԱԿԱՃԱՆ:

**Ս. Գ. ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՅՈՒԹԵԱՆ
ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ԿԵԴՐ. ՎԱՐՈՉ ՄԱՐՄԻՆ**

— Սոյն արտաքսուածը Հաստատուել և վաւերացուել է Կեդրոնական վարչութեան կողմից:

Ս. Գ. ՀՆՉ. ԿՈՒՍ. ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Ն Ի Ի Ր Ա Տ Ի Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ գանձարանի մէջ շնորհակալութեամբ ստացւած են Հետեւեալ գումարները. —

ՊՐԱՅԱՅՈՒՄ	Մ-դէս	—	—	500	Ֆր.
ՍՈՒՆՆԱԿԱՆ	"	—	—	350	"
ՈՒՇՏԻ	"	—	—	250	"
ՔԵՐՈՒՆՆԱԿԱՆ	"	—	—	200	"
ԳԱՆՏՈՒՄ	"	—	—	150	"
ԿԱՆՈՒՄ	"	—	—	100	"
ՄԵՏՈՒՆՆԱԿԱՆ	Խոյն	—	—	29	"
ԴՊՄԻՐԻ	Մ-դէս	—	—	10	Օսմ. ո.
ՈՒՇՏԻ	"	Հոկ. Գ. Ե-ի ձեռամբ	—	450	Լըն.
ԸՆԴՈՒՄ	"	"	—	285	"
ԳԱՆՏՈՒՄ	"	"	—	100	Լըն.

Վերջին գումարը ներած են.—

Գ. Գրիգորեան՝ 20, Տիկին Ղ. Գրիգորեան՝ 20, Խ. Աղադեան՝ 20, Ե. Ժամկոչեան՝ 20, Լ. Թէվէրէեան՝ 10, Ո. Սարգիս՝ 5, Ե. Դերմակեան՝ 5 զրշ.:

Ս. Գ. Հնչակեան Կուսակցութեան Պուրկաղի Մասնաճիւղը ստացած է.—

ԺԻՐԱՅՐ ԽՈՒՄԱՐԷ.— Իստաւոր 11, Եմաւոն-Պարոյր 15, Մ. Հայկ 20, Չավուշ 5, Սարսափ 4, Հարմայր 4, Վէճ 3, Հօլֆիան 2, Բրզանդ 2, Պողոստ 8, Նիզակ 4, Իշխան 1, Արմէն 1, Ղարիպ 1, Աւետիս 2. Գում. 83 Ֆր.

ԱՐԺԻՐ ԽՈՒՄԱՐԷ.— Եփրատ 20, Սեպուհ 7, Տճօս 5, Հարգանդ 2, Համր 10, Ժայռ 3, Գիտակից 1, Վրաստան 2, Որսորդ 3, Գալմալ 2, Հայկունի 3, Վրէժ 2, Վաղարշակ 3, Ներսէս 3, Վիշապ 3, Դեռ 3, Հրատ 3. Գում. 75 Ֆր.

ԱՐԽԱՆԵԱՆ ԽՈՒՄԱՐԷ.— Մասիս 12, Ա. Արայ 14, Պոլսաճի 5, Հմայեակ 10, Վատակունի 5, Արտավազը 3, Մ. Մամիկոնեան 3, Երկաթ 3, Մարտիկ 3, Տիգրան Երկաթ 3, Լեռ 2, Կաղմոս 2, Նազարեէկ 3, Երևանդ 1, Ռուբը 1. Գում. 70 Ֆր.

ՏԻԳՐԱՅ ԿԱՄՄԻՏԵ ԽՈՒՄԱՐԷ.— Մարգարիտ Յակոբեան 8.50, Վանցի Համր Մայր 15, Փիրուզ Համարձուցման 26.50, Հոփիսիմէ Համբժան 14, Արտեսակ Պաշկեան 13, Խոյնի Տէվիթեան 15, Վարդանուշ Շլտանեան 13.50, Մարտիկ Պոսթամեան 14 Գայեանէ վարդանեան 15, Աղանի Ղարիպեան 14.50, Մարթիկ Թորոսեան 12.50, Ոսկոյ Յակոբեան 12, Մարեամ Պետրոսեան 4.50, Արիկ Փշտիմալեան 4.50, Սեպի Ղազարեան 4, Եղիաշեան Արմենակեան 4, Նունիկ Եղոյեան 4, Երևան վարդանեան 3.50, Հանկուշ Համարձուցման 3, Լուսիկ Մանուկեան 2.50, Սիրանուշ Պոսթամեան 1, Մարիամ Թաշեան 1, Մանիկ Քէրոբեան 2, վարդունի Տէլիմէնեան 1.50, Երանիկ 0.50. Հարուհի 0.50 Գում. 210 Ֆր.

ՄԹ.— Չակոբայէ.— Հարմայր 2, Լուկաս Յովսէփեան 31, Մահիկ 14, Սոխակ 2, Արարատ 2. Տամար 2, Մասիս 1,

Ռաստէվոյէ.— Հնչակաւար 22, Որոտու 8. Սթրալուայէ.— Ռիմազեան 10, Հուր 7. Գարաբունարէ.— Ալիշան 12 Գումար 113 Ֆր.

Հանգանակութիւն ի նպատակ Առանցիկ աղէտեղոց, Նախածնութեամբ Ս. Գ. Հնչակեան կանանց խումբի.

Հատուցում Մ—դիս հրատ. 1 քարթ ըստ վանքի	78.65	Ֆր.
" " " " 2 " " "	91.70	"
" վանայի Մ—դիս հրատ. պատկերներ	6	"
" Գանձանակէ	15.10	"

Հանգանակութիւն ի նպատակ Կուսակցութեան՝ ընկերներու եւ նամակիրներու շրջանակի մէջ.—

Պետրոս Պոսթամեան 25, Ասատուր Աւետիսեան 20, Թոմաս Խաչատուրեան 15, Եւալար Պոսթամեան 15, Օհաննէս Աւետիսեան 15, Մակիթ Մարգարեան 15, Մելքոն Մելիքօֆ 10, Կարայ Էլի 10, Մելքոն Մելիքեան 10, Արշակ Հարարեան 10, Ասատուր Հարարեան 5, Մկրտիչ Յարութիւնեան 10, Խաչիկ Մարտիրոսեան 8, Յարութիւն Մրշիկեան 5, Աբրահամ Գրիգորեան 6, Արտաշէս 7. Մովսէս Եղիազարեան 5, Ճոռի Խաչատուրեան 5, Ղազար Պաղտատարեան 5, Մկրտիչ Եսայեան 5. Յովասափ Մուրատեան 5, Խաչիկ Մելքոնեան 5, Դուրիթ Յարութիւնեան 5, Մեծար Պաղտատարեան 5, Աղոյ Թոմասեան 5, Ասատուր Ալլահիբի 4, Յարութիւն Մանուկեան 3, Ստ. Տէլիմէնեան 3, Պողոս Սուքիասեան 3, Լեւոնդ Բալուեան 3, Յովհ. Կարապետեան 3, Սիմօն 2, Խաչիկ Քէշիշեան 2, Աբրահամ Պողոսեան 2. Գանիկ Յակոբեան 2, Գասպար Հարութիւն 2. Պողոս Կարիբեան 2. Մանուկ Կարապետեան 2, Կիրիլ Գրիգորեան 2, Սեդրակ Մելիքեան 2, Վարդան Կիրակոսեան 1, Սիւնեցի 1, Հուր 1, Ռմ 1, Համարձուց Օհաննէսեան 2, Դոնիկ 1, Միքայիլ Քէրոբեան 1, Ստ. Կարապետեան 1, Գանանց Խոյնիկ Նէր 7.50. ՄԹ.— Չակոբայէ.— Լուկաս Յովսէփեան 5, Սիրակեան Եանիկեան 5, Մարգար Մելիքեան 5, Յար. Փէլէմէնեան 5. Պողոս Դուրիթեան 2, Պետ. Գարապետեան 2, Գր. Կարապետեան 2, Յովհ. Յակոբեան 1, վարդան Ամիրխանեան 2, Յովակիմ Սեդրեան 1, Սիմոն Մէճիկեան 2. Հայկ Պարոնեան 2. Ռաստէվոյէ.— Եր. Մուրատեան 2, Օհ. Եարոնեան 2. Գըժ Դիւղաքի 2. Գարաբունարէ.— Աս. Վարդանեան 5. Չայէր.— Մ. Երզնանեան 10. Այոսէ.— Նշան Դուրիթեան 5. Գումար 344.50 Ֆր.

Ընդամուր Գումար 1295.50 Ֆր. ոսկի.

— Ընդէվի եւ Փրովիդէնսի Մ—դիսի ներառուութեան ցանկը յաշորով:

Իրան, մանդաս եւ այլն ուղարկել հետեւեալ հասցեով.—
M. BELLART
 23, Rue Boissonade. Paris (France)
 Imprimeur Gerant: E. DESGRANDCHAMPS